

# ՄԱՍԻՍ

## ՀԱՆԴԵՍ

Նախնական եւ Երկրորդական Կրթութեան

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ ԸՆԴ ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՄԲ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԱՄՍՈՅ 1<sup>Ի</sup> ԵՒ 16<sup>Ի</sup>

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ

ՈՒԹԻՈՍ ԷՖԷՆՏԻ ՊԵՐՊԵՐԵՍՆ (Ա. Ե. Ե. Ե. Ե.)

|         |        |          |   |           |        |          |
|---------|--------|----------|---|-----------|--------|----------|
| ԳԱՆՈՒՍՏ | ԷՖԷՆՏԻ | ՄԱՆԱԹԵԱՆ | ✱ | ՅՈՎՀԱՆՆԷՍ | ԷՖԷՆՏԻ | ՀԻՆԴԼԵԱՆ |
| ՄԻՀՐԱՆ  | »      | ՄՕՁԵԱՆ   | ✱ | ՅՈՎՀԱՆՆԷՍ | »      | ՍԵԹԵԱՆ   |

ՏՆՕՐԷՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆ


ԱՐՏՕՆԱՏԷՐ

Կարապետ Էմէնտի Իրիւնեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
1894

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԻՒՆ

Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ



## Ք Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Պատժողովի Խառն ժողովոյ Ազգ. Կեդր. Վարչութեան

|                                            |                 |
|--------------------------------------------|-----------------|
| Նախարան                                    | Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ |
| Բարոյական դաստիարակութիւն                  | Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ |
| Համերաժիս պատժողովութիւն                   | Գ. Ա. ՄԱՂԱԹԵԱՆ  |
| Շեղշայ դարը (Բացատրեալ ընթերց. աշխարհաբար) | Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ |
| Եզն (իրագիտական դաս)                       | Մ. Գ. ՄՈԶԵԱՆ    |
| Ընթացի Ֆրանսերէն լեզուի                    | Յ. Թ. ՀԻՆԴԻԵԱՆ  |
| Մարտկոյն (բնական պատմութեան դաս)           | Մ. Գ. ՄՈԶԵԱՆ    |
| Տնօրէնութիւնի մասնական տնօրէն              |                 |
| Լուրի եւ տեղեկութիւնի                      |                 |
| Գովելի գաղափար մը                          | Յ. Թ. ՀԻՆԴԻԵԱՆ  |

## Ա Զ Դ

Մասիսի խմբագրութիւնը պատրաստ է մասնաւոր յօդուածի կամ քղապատեան ձեւի տակ գտնացում տալ բոլոր անոնց՝ որք մասնաւոր նամակաւ բացատրութիւն կամ կարծիք խնդրեն իրմէ՝ դպրոցական խնդիրներու, մէքոսներու, կրթութեան ո՛ր եւ է նիւղի վերաբերեալ դժուարութեանց եւլն. մասին:

Շնորհակալութեամբ կ'ընդունի եւ կը հրատարակէ նաեւ դպրոցական խնդրոց վրայ իրեն հաղորդուած շահեկան ու ամփոփ տեղեկութիւններ, ինչպէս նաեւ իր յատուկ աշխատակիցներէ դուրս ձեռնհաս ուսուցչաց կամ կրթական գործոց հետա-  
հետեւող ո՛ր եւ է կարող անձի կողմէ յղուած օգտակար գրութիւններ որ իր ծրագրին սահմանէն դուրս չեն ելներ:

# ՄԱՍԻՍ

## ՀԱՆԳԵՍ

Նախնական եւ Երկրորդական Կրթութեան

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ ԸՆԴ ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՄԲ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

43<sup>րդ</sup> Տարի    Նոր շրջանի քիւ 1    1 Մայիս 1894

ՊԱՇՏՈՆԱԳԻՐ

ՎԱՍՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ «ՄԱՍԻՍ» ԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹԻ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Կ. ՊՈԼԻՍ

ԴԻԻԱՆ ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՅ

ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Համար 424

. . . Ատենայեւ . . .

Ազգային Կեդր. Վարչութեան Ուսումնական Խորհրդոյ

Ամսոյս 14 քուականաւ եւ 138 համարաւ Ձեր ուղղած յայտագրովը բացատրած էիք կրթական եւ մանկավարժական բերքի մը գոյութեան պէսքն եւ առաջարկած էիք Մասիս լրագիրը հրատարակել նոյն ուղղութեամբ Ուսումնական Խորհրդոյ առաջնորդութեան եւ պատասխանատւութեան ներքեւ եւ համաձայն յատուկ կանոնագրի մը, որու ծրագիրն եւս ներկայացուցած էիք Ձեր նոյն յայտագրովը:

Խառն Ժողովն ուժադրութեան առաւ Խորհրդոյդ այս առաջարկութիւնն եւ լսելէ յետոյ այն բացատրութիւններն, որք յատենի Ժողովոյ հաղորդուեցան Ձեր կողմէ այս խնդրոյն նկատմամբ, հաստատեց այդպիսի բերքի մ'օգտակարութիւնն եւ գոյութեան պէսքն, ըստ ամենայնի քաջալերութեան արժանի դատելով զայն եւ միակ բարեփոխմամբ մ'ընդունելով եւ հաստատելով ներկայացեալ ծրագիրն, արտօնեց Պատ. Խորհուրդդ ձեռնարկելու այդ բերքին հրատարակութեան:

Հետեւաբար, ընդ գրոյս կը հաղորդեմք Ձեզ կանոնագրին վաւերացեալ օրինակն, եւ աներկմիտ եմք որ այդ մանկավարժական բերքն՝ շնորհիւ խնամոց Պատ. Խորհրդոյդ, պիտի կարենայ սատարել մեծապէս մեր Ազգային կրթութեան, եւ իր ուղղութիւնն ու նկարագիրն անփոփոխ պահել միշտ:

28 Մարտ 1894

Կ. Պոլիս

Մնամք աղօթարար

ՊԱՏՐԻԱՐՔ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

ԽՈՐԷՆ

## ՆԱԽԱԲԱՆ

Դաստիարակութիւնը այնքան մարդկային ընկերութեան համար գոյութեան անհրաժեշտ պայմաններէն մին է որ անոր սկիզբը անշուշտ չէ կարելի բաժնել նոյն իսկ մարդկութեան սկիզբէն: Երբ անասունք իսկ իրենց ձագերը կը խնամեն ժամանակ մը, մինչեւ որ ընութեան սահմանած կատարելութեան հասնին անոնք, անասունք որք իրենց կենաց կարեւոր ամէն բնական ուղղութիւններովն ու դործունէութեան միջոցներովը վիճառած կը ծնին, որչափ աւելի մեծ պէտք մ'է որ մարդիկ իրենց մատուց սերնդեան վրայ հոգածութիւն ունենան՝ հասցնելու համար իրենց զաւակունքն այն վիճակին ուր կարողանան ինքնին պահպանել ու զարգացնել իրենց գոյութիւնը, վասն զի, ամէն արարածներէն, մարդն այն է որ՝ բարձրագոյն կեանքի մը համար ոտելած ուժն է՝ կը ծնի սակայն ամենէն աւելի տխրեւոր ու անկատար, անբաւական բնազդներով, սաղմնային կարողութիւններով, եւ որ, ընդերկար անգոր անձամբ անձին բաւելու եւ իր ճակատագիրը լեցնելու, պէտք ունի անհամեմատ կերպով փափուկ ու երկարատեւ խնամքներու:

Դաստիարակութիւնը, ինչպէս մարդկութեան չափ հին, անոր պէս ալ անկատար ու նախնական վիճակէ սկսած, անոր զարգացման յամր քայլերուն հետ զուգընթաց քալած ու աստիճանաբար զարգացած է: Մարդիկ, գրեթէ միշտ, առաւել կամ նուազ, հասկցած են դաստիարակութիւնը իբրեւ ամբողջութիւնն այն միջոցներուն որովք նոր սերունդը կը պատրաստուի կենաց. բայց այդ պատրաստութեան դործը անշուշտ միշտ ըմբռնուած է վերաբերութեամբ այն ընկերական միջավայրին ուր նոր սերունդը պիտի ապրէր եւ այն կեանքի իտէսալին զոր կը յղանային այլ եւ այլ ժողովուրդք: Ափրիկէի վայրենի իր զաւակին տուած դաստիարակութեան մէջ ու-

րիչ վախճան չէր կարող դիտել բայց եթէ ընել զայն նետ նետելու, սակրը գործածելու եւ վտանգներէ խուսափելու մէջ ճարտար: Աթենացին իր նոր սերունդը կը ջանար հասցնել կատարելութեան տիպարի մը զոր մարմնոյ եւ հոգեոյ ներդաշնակ զեղեցիկութեան մը մէջ կը փընտռէր: Պարսիկն՝ ըստ Հերոդոտոսի վկայութեան՝ երկու բան մանաւանդ ուշադիր էր սովորեցնել իր զաւակին, ազեղ քաշել ու ճշմարտութիւնը խօսիլ: Երբայցեւոյն տեսականը՝ սրբութիւնը, բարեպաշտութիւնն էր: միջին դարու աւատականութիւնը ասպետացու պատանւոյն ու մատուցած հաս ազնուագէտոյն համար անոգւտ կը համարէր ուսումը, եւ մարմնական կորովն ու քաջութիւնը միայն ստանալի կարեւոր յատկութիւններ, իսկ կղերք՝ վանքերու մէջ տուած կրթութեամբ՝ կ'երեւէր մոռնալ թէ մարդը մարմին մ'ունի: Արդէն, դեռ մինչեւ մատ մեր ժամանակներուն, ինչպէս գիտեմք, մեր մէջ ուսումը եկեղեցականին յատուկ ու պիտանի բան մը կը նկատուէր, իսկ աշխարհիկ կենաց սահմանուած մանկան համար հասարակաց կարծիքը առ առաւելն Սաղմոսն ու Նարեկը անսխալ կարգալ ու քիչ մը գիր գրել ու հաշուել բաւականաչափ կրթութիւն մը կը դաւանէր:

Բայց ըստ չափու որով կը զարգանայ մարդկային ընկերութեան մտաւորական ու տնտեսական վիճակը, կրթութեան պահանջներն կը փոխուին, կը բազմապատկին, դաստիարակութեան ձգտումը կը բարձրանայ: Ոչ միայն ուսման ու կրթութեան առարկայները կը բազմանան, կը զանազանին, այլ եւ մեթոդները կը բարեփոխին: Դաստիարակութիւնն դարուց ընթացքին մէջ դոյնացած ու բարդուած բարոյական, մտաւորական ու ճարտարական յառաջդիմութեանց աւանդին յանձնումն է մէկ սերնդեան ձեռքով անոր յաջորդ սերնդեան, եւ որչափ այդ աւանդն տակաւ ճոխանայ, կրթութեան նիւթն այնքան կ'ընդարձակի, հետեւապէս եւ կրթութիւնը կ'աստիճանաւորի

ու կը ճիւղաւորի: Եւ գիտութեանց յառաջդիմութեամբ մարդկային բնութիւնը լաւագոյն ուսումնասիրուելով, անոր վրայ ներգործելու միջոցներուն ծանօթութիւնն եւս կը կատարելագործի, որով կրթութեան նիւթին հետ անոր կերպն ալ կը զարգանայ, եւ դաստիարակելը կը դառնայ հետզհետէ որքան աւելի արգիւնաբար ու վստահ, ա՛յնքան եւ բազմապահանջ ու դժուարին արուեստ մը, գիտական հիմանց վրայ հաստատուած: Ժողովրդոց հոգածութիւնն իրենց մատաղ սերունդեան կրթութեան մասին՝ նոյնպէս աւելի սուր, աւելի եռանդուն հանգամանք մը կ'առնու երթալով, քանի՛ իրենց պատասխանատուութեան զգացումն հանդէպ իրենց զաւակաց երջանկութեան խնդրոյն աւելի նրբանայ, քանի՛ լաւագունին տենչը իրենց մէջ աւելի զօրանայ, քանի՛ դաստիարակութեան շինիչ կարողութիւնը ու ժառանգականութեան ալ իրար յաջորդող սերունդներու ճակատագրին վրայ ներգործիչ դերը աւելի հասկցուն: Աստի՛ կառավարութեանց ու վարչութեանց աճեցուն զոհողութիւնքն ու ջանքերն ի նպաստ կրթութեան, անոր շրջանակն լայնելու, անոր մակարդակը բարձրացնելու, անոր կազմակերպութիւնը կանոնաւորելու, զայն հանրային, ամբողջական, ձրի ու պարտաւորիչ ընելու համար:

Ըստ այսմ, զարգացեալ կեդրոններու մէջ, միջին դարու համալսարանք անհամեմատ փոփոխութիւն կրած են իրենց ուսուցման նիւթերուն ու եղանակաց մէջ, ուսուցչապետք գրկելով մարդկային ծանօթութիւնն իւր բովանդակ տարածութեան ու խորութեան մէջ, եւ, քննութեան ու խուզարկութեան ոգիէ մ'առաջնորդուած, պրպտելով ամէն ուղղութեամբ անծանօթին դաշտը, եւ նորանոր համալսարանք հիմնուած ու հետզհետէ հիմնուելու վրայ. երկրորդական կրթութեան յատուկ ուսումնարանք, ֆօլիօներ, շիսէներ, ժիմնազներ, հաստատուած են ամենուրեք գլխաւոր քաղաքաց մէջ, ո՛չ միայն պատանեաց այլ եւ օրիորդաց համար, դպրութեանց եւ գի-

տութեանց մէջ զարդացնելու համար նախակրթարանաց աւանդած ուսումը. իսկ այս վերջինք, որք խորիսխն են ամէն կրթութեան, որք առաջին ու ընդհանուր ձեւակերպումը, բարոյական մկրտութիւնը կուտան մատաղ հոգիներու, այն է պաշտօն ունին ֆիզիքական, իմացական ու բարոյական կրթութեան անհրաժեշտ տարերքն մատակարարելու ամէն մարդոց իրենց առաջին տարիներուն մէջ, եւ ըստ այսմ են գերազանցապէս հիմնական ու կենսական գործարաններ մարդկային ընկերութեան, բուն ժողովրդական վարժոցներ, նախկին ժամանակաց մէջ՝ իբրեւ ազգային հաստատութիւն գրեթէ գոյութիւն իսկ չունենալէ յետոյ, այժմ, բանաւոր կազմութիւն ստացած ու խնամով հսկուած ձեռնհաս մասնագէտ անձերէ, մինչեւ յետին գիւղականներուն մէջ հաստատուած, սիւռուած են. ու զանոնք վարող դաստիարակներ հասցնելու համար կան բազմաթիւ վարժապետանոցներ, ուր Սոկրատէն մինչեւ Մոնդէյն, Լոք, Կոմենիոս, Ռուսօ, Բեսդալօցցի, Պէյն ու Սթենսէր, հոգեբան իմաստասէրներու եւ դաստիարակաց հետազօտութիւններէն ու դիտողութիւններէն մզուած դաստիարակութեան գիտութեան մը տեսական ու գործնական ուսումը կը դրուի այդ ազգայ մանկավարժներու տրամադրութեան տակ, իբրեւ լուսաւոր ուղեցոյց իրենց ամենակարեւոր պաշտօնին գիտակցաբար գործադրութեան: Եւ այս նախնական կրթութեան մասին այնպիսի է փոյլն որ դաստիարակաց համախմբումներ, այդ կեդրոններուն մէջ, յաճախապէս տեղի կ'ունենան կարծեաց ու փորձառութեանց օգտաւէտ հաղորդման իբրեւ միջոց, եւ մանկավարժական պարբերական հրատարակութիւնք, այլազան ու բազմաթիւ, անդուլ կը մշակեն կրթողական նիւթերն ու միջոցները եւ անոնց նկատմամբ մրտքերը հետաքննի յարատեւ չարժման ու յառաջդէմ գործունէութեան մէջ կը սլահեն:

\*  
\* \*

Դաստիարակութեան այս զարգացման մէջ ի՞նչ է մեր բաժինը :

Մեզի գալով, թէ եւ, նոյն իսկ քրիստոնէութեան առ մեզ սկզբնաւորութեան հետ, կը տեսնեմք դպրոցներ հաստատուած մեր մէջ, Ս. Լուսաւորչի ջանք, յոյն եւ ասորի դպրութեանց ուսման համար, եւ յետոյ, զրին գիւտին հետ, Ս. Սահակայ եւ Ս. Մեսրոպայ խնամոց տակ, նաեւ հայերէն դպրութիւն ու թարգմանութիւն սովորեցնելու համար «քաջուշեղ» ուսանողներու, եւ թէպէտ անտի եւ այսր, ամէն դարու մէջ, այլ եւ այլ կողմեր ունեցանք վանական համբաւաւոր ուսումնաւարներ, եւ մօտ ատեններ՝ աստ եւ անդ հիմնուեցան, Ազգին, բարերարաց կամ դաստիարակաց նախաձեռնութեամբ, երկրորդական ուսումնարաններ, եւ դարուս մէջ, մանաւանդ կէսէն յետոյ, ժողովրդական կըրթութեան ծառայող թաղային ու ընկերական երկսեռ դպրոցք հաստատուեցան ու աւելի կամ նուազ ընդհանրացան, բայց անսուրանալի է որ կրթութեան գործը դեռ շատ յետնեալ կը մնայ մեր, մանաւանդ Արեւմտեան Հայոցս մէջ :

Մեր նախակրթարանները, ընդհանրապէս կից եկեղեցւոյն, ծնունդ առած են հայ տղոց եկեղեցական մատենից հասարակ ընթերցումն ուսուցանելու պէտքէն. առաջին վարժապետները քահանայներն եղած են, ինչպէս դեռ գիւղերու մէջ շատ տեղ, ժամանակին պահանջումներուն առջեւ այս համեստագոյն ծրագիր հետզհետէ ընդլայնուեր, գիր, թուաբանութիւն ու քրիստոնէական վարդապետութիւն աւելցեր, եւ, այս ու այն թաղին կամ քաղաքին դպրոցը մինչեւ քերականութիւն ու ճարտասանութիւն աւանդելու բարձրացեր է. յետոյ քիչ մ'աշխարհագրութեան ու տոհմային պատմութեան, քիչ մը տաճկերէնի ու վերջերս քիչ մ'ալ ֆրանսերէնի ուսման յաւելումը յառաջ բերած է տաճկահայոցս մէջ կրթութեան այն տիպը ուր կանգ առած են այսօր ընդհանրապէս մեր ամենէն յաւակնոտ թաղերու վարժարանք, երբ քահանայնե-

րուն կամ տիրացու վարժապետներուն աւանդած կրթութիւնն սկսած է անբաւական համարուիլ, ի չգոյէ նոր պէտքերը գոհացնող վարժապետի, տարօրինակ ու շատ ֆեափափար երեւոյթ մը յառաջ եկած է մեր նախակրթարանաց մէջ. ոչ թէ վարժապետներ ունեցած ենք, այլ մասեր վարժապետի, կոտորակելով մանկութեան դաստիարակին պաշտօնը հայկաբանին, թուաբանին, տաճկաբանին, գաղղարանին ու կառավարչին մէջ, վասն զի այս անունով ալ պաշտօնեայ մ'ունեցեր եմք եւ ունիմք մեր նախակրթարանաց մէջ, տղաքները զսպելու եւ լուծիւն պահել տալու պաշտօնով : Ու մեր մանկավարժները, մասնակի ծանօթութեանց միայն տէր, ժողոված եմք աստի անտի, ըստ բախտի, չզղալով պէտքն պատրաստութիւն մը տալու կամ պահանջելու իրենց կենսական պաշտօնին կոչման, ո՛չ մէկ վարժապետանոց ունեցած ըլլալով ցարդ : Դասագրքերու եւ մեթոտներու յետամնացութիւն, աւանդական անբանաւոր եղանակաց շարունակութիւնը բնական հետեւանքն եղած է իրաց այս վիճակին, վասն զի ուսուցիչք եւ դասագրոց հեղինակք ու գործադրիչք, եւ բացառաբար ի լոյս եկած լաւ դասագիրք մ'ալ անօգուտ կը դառնայ՝ երբ ուսուցիչը չըմբռներ մեթոտի ոգին եւ լաւ ու յուրի մեթոտներու զանազանութիւնը չէ կարող ընել Վերջապէս, մեր նախակրթարանաց մէջ, գրեթէ լոկ ուսմանց, ծանօթութեանց կողմին կարեւորութիւն տրուած ըլլալով, կրնանք ըսել թէ անտես առնուած է ցարդ մանկանց դաստիարակութեան բուն նըպատակը, այն է անոնց բոլոր կարողութեանց ներդաշնակ զարգացումը, ֆիզիքական ու բարոյական մարդուն կազմութիւնը : Ուսումնական այդ մասն իսկ կը մնայ շատ թերի, քանի որ, զոր օրինակ, բնական գիտութեանց պէս կարեւոր գիտելիք բացակայ են մեր շատ մը դպրոցներէն : Իսկ մեր երկրորդական կրթութեան հաստատութիւնք-մեր բարձրագոյն այդ կրթարանք-այսօր թուով յոյժ սակաւ ու անբաւական են անշուշտ. հազիւ

մէկ քանի վարժարանք ունին արժանիք այդ անունը կրելու, եւ անոնք եւս լոկ արական սեռի կրթութեան ծառայող: Յայտնի է թէ այդ կարգի վարժարանաց մէջ դասախօսելու համար շատ քիչեր ունիմք հիմնապէս պատրաստուած: Ծրագիր ու մեթոտ պէտք ունին ընդհանրապէս լրբջ ուսումնասիրութեան, եւ դեռ մեր հանրային բարձրագոյն ուսումնարան դուրս չէ ելած փորձի չըջանէն:

Սակայն ինչ որ գոհունակութեան արժանի է՝ այն է որ կայ կրթական շարժում մը. հիմնական բարեկարգութեան մը պէտքն զգացուած է. կրթական խնդրոյն աւագ կարեւորութիւնը կ'ըմբռնուի այսօր առաւել քան երբեք, և դէպի լուսագոյն քայլեր կան առնուած: Ազգային կեդրոնական վարչութիւնը հրատարակեց նախնական կրթութեան կազմական կանոնագիրը, որ մեր նախակրթարանաց մանկավարժական կազմակերպութեան պայմանները և այլ յարակից պարագայները կը ճշգէ, և որուն ցոյց տուած ուղղութիւնը, տակաւ գործնականին մէջ անցնելով, մեծապէս պիտի նպաստէ անշուշտ բարեփոխելու մեր թաղային վարժարանաց կացութիւնը: Մի քանի տարիներէ ի վեր Ուսուցչական ժողովներ տեղի կ'ունենան. իրենց արուեստը սովորելու եւ գիտակցութեամբ ի գործ դնելու հետամուտ ուսուցիչներ կը յայտնուին. ուսանողներ կը մեկնին աստի անտի՝ յեւրոպա մանկավարժական ուսմանց աշակերտելու, ու դաստիարակութեան գիտութեան դասեր կ'աւանդուին մէկ երկու ուսումնարանաց մէջ: Մանկապարտէզի դաղափարը եռանդագին ընդունելութիւն մը կը գտնէ, և բազմաթիւ վարժուհիներ ֆրէզպէլի եղանակը սովորելու փափաք կը ցուցնեն: Այս ամենայն մեր մէջ կրթական ոգւոյ զարթում մը ցոյց կուտայ, եւ կ'աւետէ դպրոցական լրբջ բարեօքմանց թուական մը, լրբջ ջանքերու սկզբնաւորութեան ու շարունակութեան իրը հետեւանք:

\*  
\* \*

Լուրջ ջանքեր, այո՛, յանուն կրթութեան պէտք է ի գործ դնել, գործնական միջոցներ ի կիր առնուլ, իմացական ու նիւթական ոյժեր վաանել, իւրացնելու համար տակաւ ու մերովսանն, դաստիարակութեան արուեստին դարուս մէջ գործած յառաջդիմութիւնքն, առողջ սկզբանց ու բանաւոր հիմանց վրայ հիմնելու մեր մատաղ սերնդեան կրթութիւնը, եւ վարչապէս սահմանուած ու հրահանգուած բարեփոխումներն արդիւնաւորելու համար: Այդ ջանքերուն ու միջոցներուն կարեւորագոյններէն մին է անտարակոյս կրթական մամուլը, որ ժողովուրդի մը մէջ հրապարակաւ կ'արծարծէ ու կ'ուսումնասիրէ դաստիարակութեան խնդիրները, թեւադիր ու մղիչ կ'ըլլայ կարեւոր ուղղութեանց, հաղորդակցութեան մէջ կը դնէ մտքերը, լոյսերը, փորձառութիւնները, կը դասախօսէ իրեււամենէն լսելի դասաբեմէ մը, ուղղութիւն եւ հրահանգ կուտայ ուսուցչաց, եւ այսպէս՝ իր միջավայրին մէջ՝ կը լինի մին յարդիւնաւորագոյն սատարներէն կրթական գործոյն զարգացման:

Ահա՛ այս սատարը, որ դեռ ուրիշ շատերու հետ կը պակսէր մեզ, կուղայ գէթ մասամբ ընձեռել Ուսումնական Խորհուրդը բոլոր կրթական մարմնոց ու պաշտօնէից եւ ամէն դաստիարակութեան բարեկամաց, իր վերին տեսչութեան տակ իբրեւ «նախնական եւ երկրորդական կրթութեան հանդէս» հրատարակելով Մասիսը: Ինչպէս թերթիս ճակատը տպուած Պատրիարքական պաշտօնագրէն կը տեսնուի, Ազգ. կեդր. վարչութեան պատկ. Խառն ժողովը այս նպատակաւ Ուս. Խորհրդոյ ներկայած առաջարկին տուած է իր կատարեալ համակրալիւ հաւանութիւնը եւ իր թեւարկութեան տակ առած որդեգրած է Մասիս մանկավարժական թերթը: Անոր գոյութիւնը պաշտօնապէս ապահովուած, հրատարակութեան գործն ալ բաւական գոհացուցիչ պայմաններու մէջ դրուած ըլլալ կը կարծեմք, մէկ կողմէն համեստ՝ այլ աշխատասէր ուսուցիչներէ բաղկաց-



նուազ ունի եւ դպրոցն իւր բարոյացուցիչ բաժինն ու ազդեցութիւնը, ո՛չ թէ միայն անոր համար որ դպրոցին մէջ կրնամք սովորիչ մեր զանազան պարտաւորութիւնները, այլ մանաւանդ այնու որ ամէն ինչ վարժարանին մէջ, դասք եւ վարմունք, աշակերտաց եւ ուսուցչին, կրնան ծառայել եւ օգտակարապէս գործածուիլ լաւ սովորութեանց կազմութեան, զգացմանց եւ կամաց մշակութեան: Բայց առաջին եւ անհրաժեշտ պայմանն է որ ուսուցիչը, սիրելի եւ յարգելի եղած աշակերտաց, նոցա վրայ ճշմարիտ քարոյշական հեղինակութիւն մ'ստացած լինի, յանձին իսկ իւրում տալով նոցա բարոյական յատկութեանց (բարեմասնութեանց) օրինակն:

— Իմացական դաստիարակութիւնը կը պատրաստէ բարոյական դաստիարակութիւնը: Իմացականութեան լաւ յատկութիւններ, ուղիղ դատողութիւն, խորհրդեածութիւն, լաւազոյն նեցուկներ եւ բարոյական յատկութեանց բողբոջման, եւ ուսման ամէն մասունք ու հրահանգք կրնան նպաստել բարոյականութիւնը զարգացնելու, ինչպէս երբ ուշադիր ըլլամք քերականութեան դասի մը համար ընտրելու բարոյալից օրինակներ, չարագրութեան առարկայներ ընտրելու բարոյացուցիչ նիւթերէ, ընթերցումաց առթիւ մեր խորհրդածութիւններէն հանելու չայեկան խրատներ: Եւ նոյն իսկ բարոյագիտութեան ուղղակի ուսուցումն ունի իւր օգտակարութիւն: Բայց ասոնք չեն բաւեր, կայ մասնաւոր ու յատուկ դաստիարակութիւնը քարոյշականութեան, որոյ էական տարերք են 1. Բնագիտանց եւ նկարագրաց ուսումնասիրութիւնը, 2. Սովորութեան կազմութիւնը, 3. Զգայութեան մշակութիւնը, 4. Կամաց մշակութիւնը, 5. Վարժուց եւ պատժաց դրութիւնը (discipline):

— Ուսումնասիրութիւն քննադմանց եւ նկարագրաց: — Թէպէտ եւ նկարագրիք դեռ վերջնապէս կազմուած չէ տղայոց քով, այսու հանգերձ ամէն անհատի մէջ կայ ժառանգական ու անձնական տաղանդներէն զուարճուիչ զոր իր հետ

բերած է ի ծնանելն, եւ զոր հետզհետէ պիտի յեղակերպեն ազդեցութիւնք ընտանեաց, դպրոցին, կենաց, կամաց: Այս նախնական դումարը կը կազմէ բնաւորութեան հիմքը, եւ դեռ այդ իսկ է ինչ որ կը կոչենք նկարագիր տղայոց քով, բայց չափ զանազանութիւններ կը ներկայացնէ, որով եւ տղայք կը ներկայանան արդէն զանազան բնաւորութեանց, տէր: Դաստիարակին առաջին պարտաւորութիւնն է ուսումնասիրել իր աշակերտաց զանազան քննադման քննադման համար յոռի հակամիտութիւններ եւ նպաստաւորելու բարի յոժարութիւնները:

— Խնդիր է թէ մարդկային բնութիւնն ի քնն բարի է թէ չար, եւ թէ՛ եթէ չար կամ ոչ կատարելապէս բարի՝ դաստիարակութիւնը կարո՞ղ է չարը բարիի դարձնել եւ բնութեան թերութիւնները ուղղել: Այս մասին կարծիքները կը հակառակին: Գիտեմք որ Ռուսո մարդոյն բնածին բարութեան ջերմ հաւատացող մ'է:

«Ամէն ինչ բարի է յեղանակն ի ձեռաց արարչին իրաց, ամէն ինչ կը վարժարանայ մարդոց ձեռաց մէջ...: Մարդկային սրտին մէջ չկայ սկզբնական զեղծութիւն» Ժ. Ժ. Ռուսո, էմիլ, Գլ. Ա.

Բեռքալոցցի ալ կ'ըսէ. «Մարդը բարի է...: Հակառակ ամենայնի, բացարձակ եւ ընդհանուր կերպիւ կը հաւատամ մարդկային սրտին, եւ փրկելիւ ճամբուս վրայ կը քալեմ այս հաւատքով, իրեւ թէ քուլի լաւ սալոյստակեալ հռովմէական պողոտայի մը վրայ»

Բայց այլք չունին այս բացարձակ հաւատքը ու վերադաշնակներ կ'ընեն, մարդուն մէջ տեսնելով ի բնէ թէ բարի եւ թէ յոռի յատկութեանց սերմեր, ընդունակութիւններ, ըստ ժառանգական ու կազմական հանգամանաց, եւ մանկան անմեղութիւնը դնելով մանաւանդ չարին, բարոյական՝ կամաւոր չարին անպիտութեան մէջ, որպէս կ'ըսէ Սենեկա, «Տղան անմեղ է անդիտութեամբն չարին: Վասն զի մեծ տարբերութիւն կայ չարը չկա-

մեղուն ու չգիտնալուն մէջ... կը ծնանինք առաքինութեան համար, ո՛չ թէ անով լաւագոյնս օժտուած մարդիկ դատարարակութիւն ստանալէ յառաջ՝ միայն սերմն ունին առաքինութեան, ո՛չ զնոյն ինքն առաքինութիւնը:» Եւ Քանդ կ'ըսէ. «Կրնայ ըսուիլ որ սկզբնաբար կը պարունակէ (մարդն) իւր մէջ հակամիտութիւն ամէն մոլութեանց համար, զի ունի յօժարութիւններ ու բերումներ որ զինքն՝ ընդդէմ բանականութեան ձգանց՝ հակառակ կողմը կը քաշեն»:

Անշուշտ Ռուսո կերպիւ իւր իրաւունք ունի ըսելու թէ «Ամենայն բարի է յեւանեղն ի ձեռաց արարչին իրաց»։ Բայց նոյն իսկ ի ծնանելն տղան կը կրէ՞ յինքեան զմարդկային բնութիւնն այնպէս որպէս արարիչն ըրած կամ ըլլալու սահմանած է զայն։ Ո՞ր պիտի գտնենք զուտ Աստուծոյ ձեռակերտ մարդը։ Դեռ նոր աշխարհ մտնող մանկիկն ալ կրած է արդէն ազդեցութիւնն անոր (մարդուն) որոյ ձեռքը վատթարացուցիչ կը համարի ինքն իսկ Ռուսո։ Բայց ճշմարիտ է որ մարդկային բնութեան հիմն ու ձգտումն ազնիւ են. «առաքինութեան համար ծնած է» մարդ, այո՛, բայց յոռի սերմեր կան խառնուած առաւել կամ նուազ բարիներուն հետ, եւ բարիներն ալ սերմունք են միայն. գործ է յոռիները տկարացնել, ջնջել, ու բարիները փրկել, զօրացնել, զարգացնել։ Եւ այս գործ բարոյական դաստիարակութեանն է։

—Սովորութիւնք.—Բարի յօժարութիւնք (inclination) քաջալերուելով, վարժուելով ի գործ, կը լինին լաւ սովորութիւններ։ Սովորութիւնք կը հաստատուին ըստ համեմատութեան մի և նոյն գործողութեան կրկնութեանց թուոյն, սաստկութեան ձգան կամ հաճոյքին որ մէն մի գործողութեան կ'ընկերանայ։ Պէտք է որ դաստիարակը արդիւյ՛ս ո՛ր եւ է կրկնում յոռի տպաւորութեան մը, գործի մը, որ կրնայ ծընունդ տալ մոլեխիսն սովորութեան մը, եւ ընդհակառակն նպաստել որ մանուկը յաճախ վերադառնայ այն զգացմանց, զազաւարաց, գործոց, յորոց դուրս պի-

տի գան շաւ սովորութիւններ։

Լաւ սովորութիւններէ յառաջ կուգայ բարին գործելու դիւրայօժար տրամագրութիւն մը, հետեւաբար եւ ունի բարեբար ազդեցութիւն մեր բարոյական վարմանց վրայ։ Տիկին Կիզօ ըսած է. «Մեր կարողութիւնը սահմանափակ է. գորութիւնը, լոյսը մեզմէ կախում չունին. ժամանակը միայն մերն է։ Օրուան գորութեան պիտի յաւելու վաղուանը, եւ երէկ սովորածնիս մեր այսօրուան գիտցածին մի մասն է։ Պարտականութեան գործ մ'առաջին անգամ դժուարին երեւցաւ ինձ ի գործադրել. երկրորդ անգամ, պիտի սկսիմ զայն՝ զօրացեալ այն գոհունակութեան զգացմամբ զոր անոր կատարումը տուած էր ինձ... Ընդհուպ, ա՛լ ճիգ մը չպիտի ուզէ ինձմէ, պէտք մը պիտի ըլլայ ինձ համար»։

Բայց պէտք է նկատել որ սովորութիւնը ոչ-բանաւորական (irrationnel), անգիտակից գործունէութիւն մ'է, եւ թէ ըլլայ բարի՝ բայց տեսակ մը մեքենականութիւն կուտայ, մեր ներկայն կը չըզթայէ մեր անցելոյն, եւ նոր ու անակնկալ պարագայներու առջեւ կրնայ ըլլալ անբաւական։ Հետեւաբար պէտք չէ որ սովորութեանց իշխանութիւնն ըլլայ բացարձակ. պէտք է, որպէս կ'ըսէ Ս. Վինէ (L'éducation, la famille et la société), սովորութեան անկամաւոր գործոց մէջտեղ ազատութիւնը կարենայ ժամանակ առ ժամանակ նետել իւր յատուկ գործերը, եւ, որպէս կ'ըսէ Տիկին Կիզօ, սովորութեանց կցել գործողութեան խորհրդածեալ սկզբունքները։ Սոքա են որ պիտի ներեն տղուն ազատօրէն որոշել իւր ընելիքը, պարագայից պատշաճեցնել իւր գործերը, որք պիտի արգիլեն զինքը մեքենական ու լոկ բնազդական կեանքի մէջ իյնալէ, եւ որք վերջապէս զինքը տէր պիտի թողուն ինքզինքին։

—Մեակութիւն գգայնութեան.— Զգայնութիւնն հոս կ'առնումք անձուկ մտօք, հասկնալով միայն այնու մարդուն ազնուական, այլասիրական, վեհանձնական,

վեհրդձիկ ձգտումնքն կամ յօժարութիւնքն, որք կը շինեն բարի եւ անձնուէր մարդը, ընտանեւէրը, բարեկամը, բարի քաղաքացին, տոհմասէրը, մարդասէրը, ճշմարտին, բարւոյն, գեղեցկին անձկատենչ հոգին, վերջապէս հոգեպէս կրօնազգած կրօնախոհ մարդը: Զգայնութեան ստորին ձեւերը եւս անշուշտ պարտին առարկայ ըլլալ դաստիարակին ուշադրութեան, բայց զանոնք զսպելու, չափաւորելու, ի կիրք զառաժուժմն արգելելու տեսակէտով: Իսկ ազնիւ զգացմունքն է որ պէտք է մասնաւորապէս ուշադիր ըլլալ զարգացնելու:

Այս դժուարին եւ փափուկ գործ է, բայց չէ անհնար: Ծիշդ չէ բոլորովին ըսել, որպէս կը կարծուի սովորաբար, թէ այդ ազնուական տրամադրութիւնք բընատուր կը լինին ըստ անհատից եւ թէ դաստիարակութիւնն անկարող է յառաջ բերել զանոնք: Կայ զգայնութեան դաստիարակութիւն մը որ կը կայանայ բնութեան դրած ազնիւ յօժարութեանց սերմունքը մշակելու եւ անոնց փթթման ու պտղաբերութեան օգնելու մէջ, դնելով զանոնք այս նպատակին նպաստաւոր պայմաններու մէջ ու ազդեցութիւններու տակ: — Եւ բարեբախտաբար ամենէն ապաշնորհ սրտերու մէջ կան տարերքն բարեզգածութեան զորս միայն սնուցանել ու կենդանացնել հարկ է: — Զգայնութեան մշակման կարեւորութիւնն ալ բացայայտ է՝ երբ խորհինք թէ զգայնութիւնն ո՞րքան մղիչ ոյժ մ'է գործունէութեան, եւ թէ բարւոյն սէրն ի՞նչ մեծ օժանդակ է կամքին եւ դիւրացուցիչ առաքինութեան, եւ թէ սիրտը կենդանի աղբիւրն է երջանկութեան:

— Անտեղի է կանուխէն տղաքներէ պահանջել խիստ փափուկ ու խոր զգայնութիւն մը: Հակառակ անոնց քնքոյշ շնորհաց ու սիրաժպիտ մշտած ծածկ գէմքին, իրենց զգայնութիւնն դեռ շատ կոշտ է: Արտաքին բացատրութիւնը անհամեմատ է ներքին զգացման ու պատիր: Ստիպել տղան որ շատ կանուխ տայ սիրոյ, անձնուիրութեան, բարձր զգայնու-

թեան մը փորձերը՝ բռնազբօսել է նորա բնութիւնը: այս կերպով վտանգ կոյ անկէ միայն ձեւական ծամածռումներ կամ կեղծաւորական շարժումներ ստանալու: Լաւագոյն համարինք իրականութիւնը: սպասել գիտնանք ու մշակել, զամէն ինչ ժամանակին ստանալու համար: Հասակը, կեանքը, մտաց ու սրտի աստիճանական զարգացումը պիտանի են զգայնութեան ազնուացման: Բայց միւս կողմանէ, երբ տղան ինքնաբեր կ'արտայայտէ զգացում եւ սէր, պէտք չէ կեղծիք կամ չափազանցութիւն կասկածիլ ու ցուրտ կերպով ընդունիլ: Կրնայինք սիրոյ զգացումն իսկ մարել որպէս իրաւամբ կը դիտէ Օր. Էճուօրթ (Miss Edgeworth, Essais sur l'éducation pratique):

— Սակայն գործոյն կամ արտաքին բացատրութեան եւ զգացման մէջ կայ այնպիսի փոխադարձ կապ ու ազդեցութիւն որ մերթ օգտակար եւ կարեւոր է կանխել զգացումը, եւ գործել տալ ազնիւ յօժարութեան մը ուղղութեամբ, դեռ այս վերջինը չարթնցած կամ չզարգացած: զոր օշինակ՝ ողորմութիւն տալ տալ տղուն, թէպէտ դեռ չէ հասկցած գութը, ընկերին անշահախնդիր սէրը, եթէ զգացումը ի գործ կը տանի, գործն ալ՝ մանաւանդ կրկնուելով՝ կրնայ զգացումը, յօժարութիւնն արթնցնել, ծնցունել:

— Նոյնպէս զգացմանց ու զաղախարաց մէջ կայ փոխադարձ սերտ յարաբերութիւն: Զայն կը սիրենք զոր կը ճանաչենք, ապա եւ զգայնութեան զարգացումն սերտիւ կապուած է մտքին զարգացման: Խորհրդածութեան կոչում ընելով, տղուն մտաց ներկայացնելով ի ձեռն պատմութեանց եւ օրինակաց՝ զինքն յուզելու կարող տեսարաններ ու կացութիւններ ու գործեր, անուշղակի ճամբով սրտին կը հասնինք, եւ այսպէս մտքին լուսաւորութիւնը կը նպաստէ սրտին կրթութեան:

— Օրինակին ազդեցութիւնը թերեւս զգայնութեան դաստիարակութեան մէջ ամենէն աւելի յայտնի կը տեսնուի: Եթէ կ'ուզենք որ տղայք սիրեն, սիրենք նախ զանոնք: Սիրոյ եւ անձնուիրութեան

մթնոլորտի մը մէջ թէ մեծնայ, բնակա-  
նաբար եւ ինքն պիտի լինի ընդունակ  
միեւնոյն զգացմանց, պիտի փոխադարձե-  
սէրն որոյ առարկայ կը լինի: Եթէ ծնողք  
գորովագութ են, երէց եղբարք՝ հոգա-  
ծու իրենց կրտսերաց, ամբողջ ընտանիքն՝  
միացեալ ու ներգաշնակ, դրացիք՝ բարե-  
եացակամ հաճոյակատար եւ ուսուցիչն  
ալ հայր մը, բարեկամ մը, մանուկն չի  
կրնար անզգայ ու անսէր մնալ, ինչպէս  
կարի հաւանականաբար պիտի ըլլար ցուրտ  
անտարբերութեան ու անսիրելութեան  
չոր ու ցամաք մթնոլորտի մը մէջ: —  
Զգացմունք նաեւ ո՛չ միայն սրտէ ի սիրտ,  
այլ եւ միեւնոյն հոգւոյն մէջ կրնան ի-  
րարու հաղորդել իրենց ջերմութիւնը:  
Մէկ կողմով զգայուն, պիտի կրնայ ըլլալ  
մարդ այլ կողմերով, ամէն կողմերով:  
Կայ նաեւ ներքին *սարսփոխութիւն* մը:  
Թէ ընտանեկան սիրոյ զգայուն է ոք, իւր  
սիրտը պիտի կրնայ բացուիլ այլ սէրերու:  
Գեղեցկին սէրը բարւոյնը պիտի արթնցը-  
նէ, այս ուրիշներ եւայլն:

— Սկսինք ընթացիկան զգացմունքներէն  
կամ սեռերէն, որք դիւրագոյնք են ի  
վատիլ, ա՛յնքան ընտանիքը մօտ է ման-  
կան սրտին: Այս զգացմանց մշակումն  
ընտանեկան յարկին տակ կրնայ կատար-  
ուիլ, եւ եթէ տղայ մ'ընտանեաց ջերմ  
ծոցին մէջ առած չլինի սրտի այս առա-  
ջին կազմակերպումը, անտարակոյս յոյժ դժ-  
ուարին կը լինի դպրոցին՝ զգացումներն  
յղկելու գործը: Ի՞նչ է ընտանիքը. — ըս-  
քանչեւ ապէս կը պատասխանէ Պէրսօ. «Երբ  
ի միասին կ'ապրին, երբ զիրար կը սիրեն,  
երբ իւրաքանչիւրն կը սիրէ միւսներն ա-  
ռաւել քան զինքն, երբ անոնց բարեխա-  
տութեամբն երջանիկ է ու գոբախտու-  
թեամբը թշուառ, երբ պատրաստ է խը-  
նամելու զանոնք երբ պէտք ունին իրեն,  
պաշտպանելու զանոնք՝ երբ յարձակում  
կրեն, երբ լաւագոյն կը համարի տառա-  
պիլ քան նոցա տառապիլը տեսնել, եւ  
երբ ամէնքն ի միասին մի եւ եթ սիրա-  
 են, այն ատեն, ահա՛ ընտանիքը...»  
Այսպիսի հաստատութիւն մը դպրոցն է  
ամէն բարի զգացմանց: Բարի ուրդի, պիտի

լինի մարդ դիւրաւ եւ ընտիր բարեկամ,  
անձնուէր քաղաքացի, տոհմասէր մարդ,  
ընդունակ ու կարող սրտի ամէն ազնւ-  
ւութեանց:

— Դպրոցը, ոյր գործ սկսուած ու  
դիւրացած է այսպէս տան ներգործու-  
թեամբ, անմասն չէ բոլորովին նոյն իսկ  
ընտանեկան զգացմանց մշակութեանն:  
Կրնայ օրինակներով, պատուէրներով յի-  
շեցնել զաւակաց երախտագիտութեան  
ու յարգանաց պարտաւորութիւնքն առ  
ծնողս. իսկ իւր յատուկ շրջանակին մէջ  
ունի առանձին յարմարութիւններ զգայ-  
նութիւնը մշակելու՝ ընկերակցական զգաց-  
ման զարգացմանն առիթ ընծայելով, որ-  
պէս եւ կազմութեանն այն դպրոցական  
բարեկամութեանց որք յաճախ կենաց հետ  
կը տեսնեն: Դպրոցական այդ փոքր ընկե-  
րութեան մէջ, որ արդէն աշխարհն է  
մանրանկար, փոխադարձ պէտք եւ ծա-  
ւալութիւնք, հասարակօրէութիւն ուս-  
մանց եւ խաղուց, վաստակոց ու հան-  
գստեան, կը զարգացնեն համակրութիւնը,  
արդարութեան եւ զթոյ զգացումները  
կը զարթուցանեն, ընկերական ոգին կը  
զօրացնեն: Եւ ուսուցիչն մանկանց փո-  
խադարձ յարաբերութեանց ու շիւմանց  
մէջ ամէն վայրկեան առիթ կը գտնէ քա-  
ջալերելու ազնիւ զգացմանց արտայայ-  
տութիւնները, ետական ոգւոյ ձգտում-  
ները զսպելու, բարեբար սրտազեկեցիկ  
տպաւորութիւններ յառաջ բերելու:

— Դպրոցին մէջ տղուն սիրած ընկեր-  
ներն վաղը պիտի լինին իւր քաղաքա-  
կիցները, անոնց սէրը պիտի սկսի արդէն  
յինքեան ազգայնոց ու ազգին ու երկրին  
սէրը զոր եւ պարտի ու պիտի կարենայ  
մշակել դպրոցը, մշակութիւն որում նոյն  
իսկ ուսմանց առարկայք (պատմութիւն,  
աշխարհագրութիւն, արուեստ եւ գը-  
րականութիւն) եւ ընթերցութեանք կը լի-  
նին միջոց եւ օժանդակութիւն:

— Վերջապէս պէտք է որ դպրոցը մը-  
շակէ ազնուագոյն ու բարձրագոյն յօ-  
ժարութիւնքն մարդկային սրտին, —  
բարւոյն, հշնարսին, գեղեցկին սեռերը,  
եւ կրօնային զգացումն, բարձրագոյն

յատկանիշքն մարդոյն, առանց որոց անկատար կը մնայ միշտ զգայնութեան մը-չակութիւնը: Բարեւոյ սիրոյն մշակումն է ինչ որ կը կոչուի խղճի, բարոյական գիտակցութեան, բարոյական զգայնութեան մշակումն:

Բ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Շարունակիկ)

### ՀԱՄԵՐԱՇԻ ՊԱՇՏՈՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Մեր մէջ, ամէն տեղ, մանաւանդ գաւառաց մէջ, պայքարը գրեթէ անպակաս է դպրոցին շուրջը. եւ դժբախտաբար, քիչ անգամ կը պատահի որ այդ պայքարները ծագին անկեղծ համոզումներու տարբերութենէն. ընդհակառակը, յաճախ նենգամիտ եսականութիւնն է որ կը մաքաւի ջլատել պաշտօնական մարմիններու բախտութիւններն ու ձեռնարկները զորս անոնք կը կատարեն ի նպաստ դպրոցին:

Եւ ինչ ճարտար հնարքներ են անոնք զորս կ'ընտրէ դպրոցին ակոյեանը՝ վատեցնելու համար բարի եռանդուն հոգիները: Իր բուն նպատակը՝ — Որպէս զի հարկադրէ բռնի յարգանք իր անձին համար, եւ՝ նսեմացնելով ուրիշներուն արժանիքը՝ ինքզինք գեր լի վեր համարել տայ ամենէն:

Զոր օրինակ, կը թաքչի ինք. երբէք հրապարակաւ հակառակ չխօսիր դպրոցին. ընդհակառակը, նախանձախնդիր ցոյց կուտայ ինքզինքը կրթական գործին: Բայց գաւաթ մը օղիով, կամ տաք մոեմով բարեւով մը կը յաջողի իրեն գրաւել միամիտ շատախօս անձ մը, զուրկ անհատականութենէ, հաւատարմացէս հակամէտ շարին կամ բարին: Եւ ահա զրտած է իր մուկետիկը, եթէ կ'ըզէք, իր խրտուիկը: Այնուհետեւ, ասոր բերնով, ասդին անդին, սրճարաններու, գիշերատուններու եւ գործատեղիներու մէջ պայթականութիւն կը սփռէ, համախոհներու խումբ մը կը պատրաստէ իրեն. գրգռողին շուրջ կը շատնայ, շուրջ որ երթա-

լով խուլ դժգոհութեան մը կը յանգի, թէ եւ դպրոցն ըլլայ խիստ բարեկարգ, գոհութեան միայն արժանի:

Եւ կամ, տեղւոյն քահանայներէն մին է որ կը սիրաշահի կեղծ ու պատիր միջոցներով. ու անոր միջոցաւ ոչ միայն կը ջանայ պակսեցնել դպրոցին եկամուտները մկրտութենէ, պսակէ, թաղումէ, եւն. ոչ միայն թեմական կամ թաղային գործոց կարգն ու սարքը կ'եղծանէ, այլ եւ՝ բարեպաշտութեան քողին ներքեւ՝ վէճ կը գրգռէ քահանային եւ ուսուցչական մարմնոյն մէջտեղ:

— «Փոխը այդպէս կ'ըսեն. կարգաւ չէն սորվիր ադ տղաքը դպրոցին մէջ. չգիտեմ այդչափ ծախքը ի՞նչ բանի համար կ'ընեն:

Եւ երբ՝ այս մասին, քահանան համակարծիք գտնէ իրեն, կը շարունակէ.

— Մեր երաժիշտ էֆէնտին ալ բոլորովին փախցուց համը. Եկեղեցիին մէջ չի կրնար առաջնորդութիւն ընել տղոցը. մէկը ետք, միւսը առաջ կ'սկսի կարգաւ: Հապա ինք. ճաթած ձայն մը ունի, երկար երկար կ'երգէ. կարծես թէ ձայնին կարօտն ենք մնացեր:

Ասոնց համար է, կը յարէ, որ ժողովուրդը օրէ օր կը պազի Եկեղեցիին, ու ձեր եկամուտը կը պակսի, Տէր Հայր, մեղքը չէք մի գուք ալ:

Եւ ահա նոր լար մը եւս իր ալեղին համար:

Երբեմն ալ ուսուցչական մարմնոյն մէջ կը սողոսկի այդ նենգամիտը, եւ դպրոցը բո՛ւն սրաէն կը վերաւորէ:

— Առաւուրնէ մինչեւ իրիկուն հողինիդ հանելով աշխատեցէք դուք, կը փոխապ օր մը ուսուցիչներէն մէկուն որ կ'ակնածի իրմէ, եւ լիրաները թող ուրիշին ափը լեցնեն մեր աղաները. ինչպէս, գոնէ ձենէ էլլի բան մը գիտէ՞ նորեկ էֆէնտին: Ինչ որ է, Աստուած կարողութիւն տու ձեզի:

Ուսուցիչը կը փութայ իր պատմէ իր մէկ պաշտօնակցին, այս կարեկից խօսքերը: Եւ որովհետեւ նախանձը չար խորհրդատու մըն է, կամայ կամայ կը փոխ-

ուի երկուքին ալ գաղափարաց ընթացքը, եւ հետզհետէ խոտապահանջ կը դառնան. նախ կը պահանջեն որ իրենց թուղարկ վճարուի ամսուն ճիշդ մէկին. յետոյ կ'ուզեն թուղարկ յաւելում. յետոյ աշխատութեան նուազում. ի վերջոյ կը գանգատին թէ դպրոցին բարեկարգութիւնը խախտած է, թէ աշակերտք անգուսպ դարձած են, թէ՛ վերջապէս՝ անկարելի եղած է իրենց պաշտօն վարել տիրող պայմանաց մէջ. ու կը հրաժարին:

\* \* \*

Եթէ ոչ ուրիշներ, գէթ ուսուցիչք կրնան երեւակայել թէ ոչ ցա՛րի մեծ դժուարութեան կը մատնուի դպրոցը, մանաւանդ գաւառական դպրոցը, երբ, այսպէս, տարեշրջանին մէջ, սադրանքէ մըուած՝ զանազան պատրուակներով ուսուցիչ մը կամ երկուք կը թողուն իրենց գործը անգոմանելով համերաշխութեան ոգին որ ամենուրեք պէտք է տիրէ դպրոցի մը ուսուցչական մարմնոյն մէջ:

Համերաշխ պաշտօնակցութիւնը մին է այն կարեւոր պայմաններէն որոնք կրնան ի դեբեւ հանել դպրոցին սպառնացող յայտնի կամ թաքուն ետական բիրտ ուժերը: Կ'արժէր, ուրեմն, որ մասնաւոր խորհրդածութեան նիւթ ընէինք ինչ որ՝ այսպիսի պարագայից մէջ՝ կախում ունի միայն եւ միայն ուսուցիչներէն:

\* \* \*

Դպրոցը օրն օրին ապրող հաստատութիւն մը չէ. առ նուազն մէկ տարուան համար իր նախագծեալ սրոշ գործն ունի. այդ գործին յատկացեալ են այլեւայլ կարգի ուժեր որոնց արտադրոյթը (résultante) կ'ըլլայ ուսանողաց բարին:

Այս բարին չգոյանար լիովին, եթէ մինչեւ իսկ ամենէն աննշան այդ ուժերէն դադրի յանկարծ իր պաշտօնէն: Մեքենան որուն անիւներէն մին պակաս ըլլայ՝ կրնա՞յ միթէ իր նպատակին ծառայել ապահով, ճիշդ եւ արագ. այնքան սերտ առնչութիւն ունին անոր այլեւայլ մասերն իրարու հետ:

Եւ շատ պակի սերտ է կապակցութիւ-

նը որով դպրոցի մը պաշտօնէից բաղմագիմի գործունէութիւնը կը ճուշտի միակ նպատակի մը մէջ. ուստի համերաշխութիւնը ամենէն աւելի կրթական գործին համար պէտք է. վնասը՝ որ կրնայ ծագիլ անոր չգոյութենէն՝ չպատկանիր լոկ անհատի մը, այլ հանրութեան:

Հետեւաբար, հանրային անխառնութեան գործ մը կ'ընէ այն ուսուցիչը որ՝ մէկ հարուածով յախուռն կերպիւ կը կտրէ այս կապը. բարոյապէս դատապարտելի է նա. եւ հասարակութիւնը՝ որուն կը պատկանի՝ իրաւունք ունի կասկածիլ անոր ուղղամտութեան վրայ:

Այս ուսուցիչը չէ՛ թէ միայն ուղղամտութեան մէջ կը թերանայ իր անխորհուրդ վարմունքով, այլ նաեւ կուտայ փորձ թէ նուազ յարգանք կ'ընծայէ իր տուած խոստումին, իր յանձնառութեան. երբ մէկը՝ նոյն իսկ անկարեւոր պարագայից մէջ՝ չպահեր իր տուած խօսքը, կը նկատուի խոստմագանց, եւ իբր այս՝ այլ եւս չվայելք վստահութիւն իր ծանօթներէն. իբր ի՞նչ նկատուելու է ուրեմն այն անձը, եւ այն ուսուցիչ մը, որ առանց բանաւոր պատճառի՝ չարամտօրէն կամ՝ պարզմտօրէն՝ կը խզէ իր դաշինքը եւ դժուարին կացութեան մը կը մատնէ դպրոցին վարիչ մարմինը: Խոստմագրութ մը չ'ըլլա՞ր նա, արժանի ամենուն արհամարհանքին:

Եւ դեռ աւելի՛ն կայ:

Անհատականութենէ, որոշ նկարագրէ զուրկ ըլլալու է մէկն որ սադրանքի անսայ եւ ուրիշին գործիք դառնայ: Սոսկական անձ մը կրնայ այս նկարագրին տէրն ըլլալ, խորապէս կ'արգահատինք իր վրայ. բայց երբ ուսուցիչ մըն է որ կը հրաժարի՝ մարդերն ու իրերը դիտելու, անոնց վրայ դատումներ կազմելու, ինքն իր մէջ անդրադառնալու եւ ըստ այնմ՝ գործելու կարողութեանց կիրառութենէն, այնպիսի կարողութեանց որոնց ամէն օր պէտք ունի արժանաւորութեամբ կատարելու համար իր գործը, այն ատեն պիտի մաղթէինք որ այլ եւս չվերադառնար իր պաշտօնին եթէ՛ գիտակցութիւնն

ունենալէ ետք իր վարմունքի ստորնութեան՝ յամուռէր մնալ այն անկեալ վիճակին մէջ:

Արդ մանկութեան բարին, ուղղամտութեան ոգին, եւ այն յարգանքը զոր մարդ պէտք է ընծայէ իր խօսքին ու իր անձին, կը պահանջեն որ համերաշխ գործակցութիւնը միշտ տիրէ դպրոցի մը ուսուցիչներուն մէջ մանաւանդ կուսակցութեանց ատեն, երբ անխիղճ մարդիկ չեն խնայեր՝ ապօրէն միջոցներով՝ ջլատել ի բարին ուղղութեամբ ամէն ջանք:

Ուսուցիչք բաւական սրամիտ ըլլալու են թափանցելու համար այն նպատակին զոր կեղծաւոր նենգամիտ մարդիկ կը ծածկեն իրենց լեզուին տակ, եւ բաւական խորամանկ՝ միամտաբար խաբուելով անձնատուր չըլլալու համար անոնց թեւադրանաց:

Ուսուցիչք շատ վեր բռնելու են իրենց անձը այն կրքերէն որոնք կը յուզուին դպրոցին շուրջը. միակ կիրք մը — իրենց պաշտօնին սէրը — ունենալու են. եւ այնուհետեւ ողջ ու պայծառ միտքով հանդարտիկ աշխատելու են իրենց գործին, իրարու սիրտ տալով, զիրար պաշտպանելով եւ իրարմէ լաւագոյն եւս գործելու նախանձաւորութեամբ միայն. այնպէս որ՝ ի տես իրենց միակամ գործունէութեան՝ ամենէն թերահաւատներն իսկ հաւատան դպրոցին արգիւնաւորութեան, ուժացեալ սրտերը վերստին յարին դպրոցին եւ գայթակղեալ մտքերը բուժին բոլորովին:

Գիտենք, արդարեւ, որ այս միջոցաւ միայն ամբողջապէս չեն հարթուիր առ մեզ կրթութեան խոչընդոտները. բայց կը կարծենք թէ ուսուցիչներուն համերաշխ ոգին բաւական զօրաւոր թումը մը կ'ըլլայ արգելիչ կամ աւերիչ ուժերուն դէմ: Ուսուցիչք թող ընեն ինչ որ իրենցմէ միայն կախում ունի, յաջողին կամ ոչ՝ կատարած կ'ըլլան իրենց պարտքը. եւ այս կը բաւէ պարգեւելու համար իրենց՝ սրտի անդորրութիւնը զոր ի գուր կը փնտռեն նախանձոտները, անձնատէրները եւ պարտազանցները:

Գ. Ա. ՄԱԼՔԵԱՆ

## ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ

### ԲԱՅԱՏՐԵԱԼ ԸՆԹԵՐՑՈՒԱԾ

(ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ)

#### Շեղջայ դարը

Վանայ հիւսիսային կողմը, Դուլաշէն գիւղին մօտերը, կայ Շեղջայ դարը կոչուած հողային բլուրը: Ասոր վրայ հետեւեալ զրոյցը կը պատմուի:

Մէկ հարուստ բայց ազան կալուածատէր քաղաքացւոյ ցորենի շեղջ է եղեր: Կալի ժամանակ, ինչպէս սովորութիւն է մինչեւ ցայսօր, Քախիները, Հայոց տէրտէրներ ու վանականները գեղէ գեղ կը շրջին, ցորեն կը ժողվեն: Նոյնպէս ամէն կարգի աղքատներն ու չունեցողները, մշակներ ու վարձկանները կալմաս կ'ստանան կալատէրներէն: Մըրջիւններու կառաւանք եւ ճնճուկներու երաւը թիւ ու համար չունին, որք կը կրեն ու կը կրեն: Իսկ այս ազան տանուտէրը ամենայն խստասրտութեամբ կը հսկէ իւր ցորենի շեղջին եւ ամենեւին ողորմութիւն չի տար: Խեղճ սարեկներն ու արտոյտներն ալ կը քարոտէ: Աստուած կը պատժէ ասոր խստասրտութիւնը, եւ բոլոր այդ ցորեն, իւր տեղը կը դառնայ հողի շեղջակոյտ մը: Անոր շուրջը կը ցուցնեն նսեւ այս մարդու սայլը, որ որայները բարձած, կուգար, սայլորդներով ու սայլին լծուած գոմէշներով հանդերձ քար կտրած, նոյնպէս եւ կալուածատէրը, որոյ սիրտն արդէն փայ էր:

Գ. ԵՊ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

#### Բացատրութիւնք

Շեղջայ դար. — Շեղջ կը նշանակէ դէզ, կոյս. դար կը նշանակէ բարձրաւանդակ ու զաւիւլայր տեղ, ծայր լեռան, դարաւանդ կամ դարեւանդ, գահ, գահաւանդ: Քիչ մը վարը կայ Շեղջակոյս, Շեղջ եւ կոյս

հոմանիշ բառերէն բարդուած, մի եւ նոյն այլ աւելի սաստկացեալ նշանակութեամբ, որպէս են՝ յօդակալ, հարցափորձ, հասակոսոր, ցուցահամբէս, քուսամար գոյականները:

2. Զրոյց, այն է ժողովրդական հրաւայաւում աւանդութիւն, վէպ, առասպել, որ սակայն ունի խորհրդաւոր նշանակութիւն, իր մէջ ծածկելով բարոյական այլաբանեալ իմաստ մը կամ պատմական իրողութիւն մը՝ ժողովրդեան երեւակայութենէն այլափոխուած: Այսպիսի զրոյցներ շատ կը պատմուին մեր մանաւանդ գաւառացի ժողովրդեան մէջ. անոնցմէ շատեր կցուած են տեղւոյ մը, լեռան մը, աղբիւրի մը, այրի մը, աւերակի մը, գերեզմանի մը եւն. եւ բազմաց սկիզբն անշուշտ յոյժ հին է. բերանացի աւանդութեամբ սերունդէ սերունդ հասած են առ մեզ:

3. Կալն է գիւղերու մէջ ցորենը կասելու, ծեծելու եւ ապա հոսելու համար պատրաստուած բոլորածեւ, ընդարձակ, ոլորկուած ու մաքրուած գետինը, ուր կը տարածեն ցորենի որայները (կապոցները) զորս նախ չեղջածեւ դիզած, օրան շինած են: Կալ կը նշանակէ նաեւ այս գործողութիւնը, կալ ընել, ինչպէս հոս կալի ժամանակ բացատրութեան մէջ: Այս բառով բարդուած են քիչ մ'ետք եկող կալմաս (կալէն, կամնուած ցորենէն մաս), կալաւէր (կալին, կամնուած ցորենին տէր) բառերը:

4. Շէխ եւ Ֆախի (այն է Ֆախիր կամ աւելի լաւ Ֆախր) են արարերէն բառեր. առաջինը (շէխ) կը նշանակէ ցեղապետ կամ կրօնաւոր, հմուտ կրօնական մասեցից, իսկ երկրորդ (ֆաքիր) անունը կը արուի կարգ մը մահմետական կամաւոր աղքատաց, որք բազմաթիւ են մանաւանդ Հնդկաստանի մէջ, եւ որք, յաւիտենական երանութեան արժանանալու համար, կ'ապրին մուրով (մուրացկանութեամբ) եւ ինքզինքնին կը դատապարտեն տաժանելի անձնաշարժարութեանց: Ասոնք իրենց հաւատակիցներէ կը նկատուին իբրեւ սուրբ մարդիկ: Շէխեր ու Ֆախիները, տէրտէրներ ու վա-

նականները, մշակներ ու վարձկանները. գաւառական լեզուի ոճ է ու չաղկապով կապուած երկու որոշեալ բառից միայն երկրորդին վերջը դնել գիմորոշ յօդը: Գրաբարի ալ սովորութիւն է այդ, բայց (յաճախապէս առաջնոյն վրայ միայն գրուելով յօդը. ինչ. հայրն եւ մայր նորա. զխաւն եւ զհամր. վասն հարց եւ մարցն:

5. Կարաւան է բառ պարսկերէն (քեարպան, քեարվան). կը նշանակէ ուղեւորաց բազմութիւն, բանակ մ'որ ի միասին կը ճանապարհորդեն ապահովութեան համար. կը նշանակէ նաեւ զինուորական, արհուկի բանակ: Ընդարձակ նշանակութեամբ կամ նմանութեամբ կարաւան է նաեւ որ եւ է բազմութիւն միահամուռ շարժման կամ գործունէութեան մէջ, որպէս հոս մրջիւններու կարաւանը բացատրութեան մէջ, որ է մրջնոց խումբը: Կարաւանաւորայ է ուղեւորաց եւ իրենց գրաստուոց հանգիստ ու պիտոյք մատակարարելու սահմանուած ընդարձակ իջեկան ճանապարհաց վրայ հաստատուած: Երամ կը նշանակէ բազմութիւն, հոյլ, ջոկ, վսառ, արւմ եւ կ'ըսուի կենդանեաց ու մարդոց, բայց մանաւանդ թռչնոց համար, իսկ երամակ, որ անկէ ածանցեալ է, կ'ըսուի մասնաւորապէս չորքոտանեաց համար, — երամակ խաշանց, այծից, խոզից, ձիոց, փղաց, ուղտուց, ևն:

6. Որք կը յարաբերէ մրջիւններու եւ ճնդղուկներու բառերը. պէտք էր որ իր յարաբերելոց մօտ ըլլալու համար խօսքը կազմուէր գէթ այսպէս, «Մրջիւններու կարաւանը եւ ճնդղուկներու երամը, որք կը կրեն ու կը կրեն, թիւ ու համար չունին»: Որք. որոյ գրաբար ձեւով հղովուած դերանուններ են, ինչպէս քաղաքացւոց, խստասրտութեամբ գրաբարածեւ հղովուած գոյականներ. դերանունաց ու գոյականաց գրաբարակերպ հղովմունք շատ անգամ վայելչութեամբ կը գործածուին աշխարհաբար գրուածոց մէջ:

7. Սայլորդներով... հանդերձ: Սայլորդ կը նշանակէ սայլ վարող. կազմուած է սայլ բառէն որդ մասնիկով: Այս մասնիկ ար-

մատին նշանակած գործն ընող ու մանաւանդ շարունակ ընող իմաստը կը յաւելու, այսպէս են յաճախորդ, գնորդ, անցորդ, այգորդ, անդէորդ, բաժանորդ, բազորդ եւն. բառերը: Հանդերձ նախագրութիւն է մէկտեղ նշանակող, ընդհանրապէս հին գրաբարի մէջ գործածական, բայց շատ անգամ աշխարհաբարի մէջ ևս:

8. Քար՝ կարծի, անգգայ, անգուք իմաստով. այսպէս կ'ըսուի Բաբիբս մարդ: Այսպէս բարոյական գաղափար մը մտաւոր բաղդատութեամբ նիւթական իրի մ'անունով, նոյնպէս նիւթական իրի մը գաղափարը բարոյական գաղափարի մ'անունով բացատրելն է փոխաբերական՝ ձեռնայնպէս են նաեւ խաւար միսք, քաղցած հոգի, ծարաւի սիւրս, երկաթէ կաւի եւն. բացատրութիւնք:

Շեղշայ դարի այս ժողովրդական սրտաշարժ աւանդութիւն ցոյց կուտայ տեղացի ժողովրդեան բարոյականի հինաւորաց մէկ ըմբռնումը, որ այնքան համաձայն է քրիստոնէական ոգւոյն եւ նշան մ'իր զգացմանց ազնուութեան: Այս զրոյց ցոյց կուտայ ժլատ անգութիւն կալուածատէրը իւր խտտաւորութեան համար պատժուած Աստուծոյ, յանկարծ քարացած, ինքն, եւ իւր սայլորդք, եւ իւր սայլն որայներով ծանրաբեռնած ակաղճուն: Զայն պատմելով իրենց թողանց ու զաւակաց, վանեցի պապն ու հանին, հայրն ու մայր իրենց որդիքը կը յորդորէին գլխասիրտ ըլլալու, ոչ միայն առ մարդիկ, այլ եւ առ անասունս. վասն զի իբրեւ խտտաւորութեան գործ կը պատմէին ազահ քարսիրտ կալուածատիրոջ ոչ միայն բնաւ ողորմութիւն չտալը, կալմաս չհանելն չունեւորներուն, քահանայներուն, վանականներուն, Ֆախրներուն, այլ եւ սարեկներն ու այտոյաները քարոտելը: Արդարեւ մարդ պարտաւոր է գութ ու կարեկցութիւն ունենալ իւր նմանին վրայ, օգնել անոր, սիրտիւ անոր չուառութիւնը, իւր ունեցածէն մասն հանել աղքատին, եկեղեցւոյն, վանքին, դպրոցին, հիւանդանոցին, ո՛չ թէ եսասիրաբար իրեն

միայն վերապահել այն բարիքները զորս երկինք շնորհած է իրեն: Ազնիւ հոգի մը, ինչպէս կը սովորեցնէ մեզ այս զրոյց, պարտի կենդանեաց համար խի գլխած ըլլալ, ո՛ւր մնաց իր նմանեաց, եւ անոնց մէջ օտարներուն եւս, ո՛ւր մնաց իր տոհմակցաց ու ազգականաց: Ո՛չ ոք աւելի արժանի է անշուշտ Աստուծոյ ահաճութիւնը հրաւիրելու իր վրայ, քան այդ կալուածատիրոջ նման անողորմած ձոխը, որու սրտին մէջ մեռած է գլխոյ զգացումը որ բնական է մարդուն, եւ զոր դնելով մեր սրտի մէջ՝ Աստուած ուզած է պարտաւորութիւն մ'ընել մեզ մեր նմանեաց սէրը: Այդպիսի հարուստը պէտք չունի հրաշիք քարի կերպարանափոխութեւն. ինքնին ապառաժ մ'է անբեր, ինքն իւր բոլոր ընչիւք, կանգնուած, անօգուտ, մարդկութեան ճամբուն վրայ:

Ծանօթ. — Այս բացատրութիւնք կը տրուին ուսուցչաց առաջնորդ մ'ըլլալու համար, ցոյց տալով անոնց թէ ինչ ուղղութեամբ կրնան մեկնել ընթերցուածի մը բնագիրը, լեզուի եւ իմաստի տեսուկէտով: Անտարակոյս ազատ են իրենք, նոյն խի հոս տրուած կտորներու վրայ, աւելի կամ նուազ ընդլայնել կամ բարեփոխել իրենց բացատրութիւնքը, մանաւանդ պարտին աւելի եւս պարզել՝ դիւրմիտներ ընելու համար իրենց սանուց հատուածին խօսքն ու ոգին: — Թէ եւ բացատրելի ընթերցուած մը կրնայ զանազան նիւթերու վերաբերիլ կամ զանազան ուղղութեամբ բացատրուիլ, բայց մեք հոս մեր յառաջ բերելք կտորները պիտի ընտրեմք ու բացատրեմք բարոյական պարտաւորութեանց տեսակէտով, գործնական բարոյականի դասուց շարմ'ընելով զանոնք:

Ռ. Յ. Պ.

## Ե Զ Ն

(ԽՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍ)

Տղայք, գիտեմ որ կը ճանչնաք եզն և կովը որք շատ օգտակար անասուններ են, բայց կրնանք ըսել թէ ինչ ծառայութիւններ կը մատուցանեն մեզ և թէ ինչ կուտան: — Այո, ուսուցիչ, կաթ

և միս կուտան։ — Լեն, անոր կաթովն է որ կը պատրաստենք սերը, պանիրն և կարագը։ միայն կաթ և միս կուտան, ուրիշ օգտակարութիւն չունին։ — Մարդիկ կ'աշխատցնեն այդ անասունները։ — Այո, եզն եւ երբեմն կովը մարդուն համար ընտիր օժանդակներ են։ այդ անասունները մեր սայլակները կը քաշեն։ Տեսած չէք սայլապանն որ երկար և սրածայր գաւազան մը ի ձեռին սայլին բովէն կ'ընծանայ։ — Այո, ուսուցիչ, եզը դանդաղ է, ձիուն չափ արագընծաց և աշխոյժ չէ։

Եզն և կովը մորթուելէ վերջ, միայն միս կուտան։ — Ո՛չ, անոնց մորթէն կաշի կը պատրաստուի։ Եզան մորթէն պատրաստուած կաշին կարծր կ'ըլլայ։ կովին և հորթին մորթէն պատրաստուած կաշին կակուղ կ'ըլլայ։ Կենդանւոյն մորթը մազերով ծածկուած է, կաշիին վրայ այդ մազերը չէք տեսներ։ Ինչո՞ւ։ Մասնաւոր գործիներով խաղախորդները կը բերթեն մորթերը, մազերը կը հանեն և անոնցմով կը լեցնեն ձիերու թամբերը, զարմանալի բան մը ըսեմ ձեզ։ այդ մազը իբրեւ աղբ եւս կը գործածուի հողը պարսրոտացնելու համար։

Մասվաճառին խանութին առջեւէն անցած էք, կեռերէ վար կ'սխուծած եզան մսի կտորներ տեսած էք, այդ մսին հետ իւղի խոշոր կտորներ եւս կան, այդ կենդանային իւղը ճարպ կը կոչուի։ գիտէք թէ ինչ բանի կը գործածուի։ — Այո, ուսուցիչ, անով ճրագ կը շինեն։ — Տղանքս, այդ ճարպը կամսայներու մէջ կը հալեցնեն։ մասնաւոր երկար պատրոյգներ կ'ընկղմեն հալած ճարպին մէջ։ Երբ պատրոյգը ճարպի խաւով մը ծածկուած է, այն ատեն դուրս կը հանեն և կը պաղեցնեն, այսպէս կը պատրաստուի ճրագը։ ճարպին մէջ հեղուկ մաս մը կայ կըլիւնդին կոչուած որով կը շինեն մոմը որ ճրագէն աւելի ընտիր է։ կըլիւնդինը ճարպէն շատ դժուար եղանակներով կը բաժնեն, ֆրանսացի մեծ գիտուն մը, Շըվալէօյլ, գտաւ այդ եղանակները։

Եզան ուրիշ որ մասերը կը ճանչնաք։ — Ուսուցիչ, ոսկրները և եղջիւրները։ — Ոսկրներէն ինչ կը շինեն։ — Կոճակ, դանակի կոթ, օժիկնօ։ — Շատ լաւ, ոսկրներուն ուրիշ մէկ գործածութեան վրայ չը խօսեցանք։ — Այո, անով շաքար կը պատրաստեն։ — Ո՛չ, տղաքս, անով երբէք շաքար չեն շիներ։ անիկայ շաքարը զտելու կը գործածուի։ Ասոր համար, ոսկրները կ'աճիւնացնեն, այսինքն կ'այրեն այնպիսի ամաններու մէջ որք ամէն կողմէ գոց են, այդ այրումը 36 ժամ կը տեւէ, մինչեւ որ ոսկրները կարմրին։ կարմրցած ոսկրները կը պաղեցնեն և մասնաւոր աղօրիքի մէջ դնելով կը փոշիացնեն։ Ուրիշ դասի մէջ պիտի սորվիք թէ ինչ կերպով կը գործածուի այդ փոշին որ կ'եղիւնակաւան ածուի կը կոչուի։ Ոսկրէն խէժ ալ կը հանուի։ ոսկրը իբրեւ աղբ եւս կը գործածուի։ — Ուսուցիչ, եղջիւրները ինչ բանի կը ծառայեն։ — Եղջիւրներէ կը շինեն ծխախոտի տուփ, սանտր, դանակի կոթ և ուրիշ շատ առարկայներ։ Եղջիւրին մանր կտորներն ալ աղբի դեր կը կատարեն։

Տղանք, եզան ամէն մասերուն վրայ եւս խօսեցանք։ — Ո՛չ, ուսուցիչ, անոր արեւան վրայ չը խօսեցաք։ — Եզի արիւնը շաքարի պատրաստութեան մէջ կը գործածուի։ Եզի արիւնով կը մաքրեն օշարակը։ Իսկ անոր մաղձը, գիտէք ինչ կ'ընեն։ Մաղձով կը հանեն բրդեղէններու վրայէն ճարպային բիծերը։

Ուրեմն օգտակար անասուններու շարքին մէջ առաջին տեղը պէտք է զբաւէ եզն իւր տուած օգուտներուն և մատուցած ծառայութեանց համար։

Մանօթ. (Այս դասին համար, ուսուցիչը պէտք է ունենայ կարծր եւ կակուղ կաշիի օրինակներ, ոսկրէ եւ եղջիւրէ մի քանի առարկայներ, կենդանական ածուխի փոշիով լի սրուակ մը, խէժի կտոր մը)։

Մ. Գ. ՍՕՋԵԱՆ

## ԸՆԹԱՑՔ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

(ՌՕՊԷՌԴՍԸՆԻ ՄԷՅՈՏՈՎ)

ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

[ (ԳՈՐԾՆԱԿԱՆ\*) ]

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՌԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Première leçon Բըռըմիէն լըսօն

ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

Le jeune Alexis Delatour était un assez bon garçon, qui n'avait  
 Լը ժեօն Ալէքսի Տըլադուռ եղի (յ) եօ՛ւ աւեկ Կօ՛ւ կառսօ՛ւ, իի ն'ալի  
 Մանուկն Ալէքսի Տըլադուռ էր մի բաւական բարի մանչ, որ չունէր  
 qu'un seul défaut, la paresse. Mais combien de fois n'a-t-on pas dit  
 Բ'եօ՛ւ աւեկ սեփօ շա բառեւ. Մ'ե ֆօնպիէ՛ն շը ֆոռա ն'ա-դ-օ՛ւ բա սի  
 բայց եթէ մի միակ պակասութիւն, ծուլութիւնը: Բայց ո՞րքան անգամ չունի մարդ ըսած  
 que ce vice donne naissance à tous les autres? C'est un proverbe, vous  
 Բը սը վիս սօն նեաւնս ա դու շե (զ) օդու? Մ'ե (յ) եօ՛ւ բոսօլեոպ, վու  
 Բէ այս մոլութիւնն կուսայ ծնունդ բոլոր միւսներուն: Սա է մի առակ, դուք  
 le savez. Or, nous pensons que les proverbes sont généralement vrais.  
 շը սալի. Օո, նու բանսօ՛ւ Բը շե բոսօլեոպ սօ՛ւ ժեկեոպմա՛ւ վոե  
 զայն գիտէք: Արդ, մենք կը կարծենք Բէ առակներն են ընդհանրապէս նշմարիս:

## Հայերէն Թարգմանութիւն

Մանուկն Ալէքսի Տըլադուռ բաւական աղէկ մանչ մ'էր, որ միայն մէկ  
 պակասութիւն ունէր, այն է՝ ծուլութիւն: Բայց, քանի՞ քանի անգամներ չէ  
 ըսուած Թէ այս մոլութիւնը բոլոր միւս մոլութեանց ծնունդ կուտայ: Գիտէք  
 Թէ առակ մ'է այս: Արդ, մենք կը կարծենք Թէ առակներն ընդհանրապէս  
 նշմարիտ են:

Ծանօթ. — Վերի երկու տեսակ թարգմանութիւնները, մանաւանդ բառականը,  
 կարգալէ վերջ աչնքան որ Քրանսերէն բառերուն արտասանութեան ու նշանակու-  
 թեան ընտելացած ըլլայ, ուսանողն բնագիրն երկու սիւնակներու բաժնելու է, մէկ  
 սիւնակին մէջ Քրանսերէն բնագիրն եւ զիմացը թարգմանութիւնը, ամէն մէկ տողին  
 քանի մը բառ միայն: Յետոյ Քրանսերէնէ ի հայերէն եւ հայերէնէ ի Քրանսերէն  
 թարգմանելու է: Հետեւեալն մէկ օրինակն է այս եղանակին:

(\*) Իւրաքանչիւր դաս երկու մաս պիտի ունենայ, մին գործնական եւ միւսն՝ տեսական ու վերլուծա-  
 կան: Այն անձինք որ կարելի եղածին չափ շուտ Քրանսերէն հասկնալ եւ խօսիլ կ'ուզեն՝ ի սկզբան գործնական  
 մասով կրնան զոհանալ: Երկրորդ մասը մասնաւորապէս անոնց համար է որ կը վստիարին լեզուին վրայ աւելի  
 հիմնական եւ կատարեալ հմտութիւն ունենալ: Գործնական մասն աղէկ մը չիւրացուցած՝ պէտք չէ տեսականին  
 անցնիլ:

## Փոխադարձ Թարգմանություն

## Ֆրանսերէնէ ի հայերէն

Première leçon  
Le jeune Alexis Delatour  
était un assez bon garçon  
qui n'avait qu'un seul défaut,  
la paresse.  
Mais, combien de fois  
n'a-t-on pas dit  
que ce vice  
donne naissance  
à tous les autres?  
C'est un proverbe,  
vous le savez.  
Or, nous pensons  
que les proverbes  
sont généralement vrais.

## Հայերէնէ ի ֆրանսերէն

Առաջին դաս  
Մանուկն Ալէքսի Տըլատուր  
բաւական աղէկ մանչ մ'էր,  
որ միայն մէկ պակասութիւն ունէր,  
ծուլութիւնը:  
Բայց, ո՞րքան անգամ  
չունի մարդ ըսած  
քէ այս մոլութիւնը  
կուտայ ծնունդ  
բոլոր միւսներուն:  
Սա է մի առակ,  
դուք զայն գիտէք:  
Արդ, մենք կը կարծենք  
քէ առակները  
են ընդհանրապէս ճշմարիտ:

## Խօսակցություն

Ծանօթ. — Հետեւեալ հարցումներն այնպէս մը կազմուած են որ ուսանողն կարող է անոնց պատասխանելու իւր գիտցած բառերով: Պէտք է պատասխաններուն սիւնակը գոցել, կարգաւ մէջ մի հարցում եւ անոր պատասխանել ֆրանսերէն լեզուաւ թէ՛ բերանացի թէ՛ գրաւոր: Ապա բաղդատել իւր տուած պատասխանները գրքին պատասխաններուն հետ: Մէկ վարժութիւնը աղէկ մը չկատարած միւսին չանցնիլ:

## Հարցումներ

Ո՞ր դասն է այս:  
Qui était un assez bon garçon?(\*)  
Ի՞նչ տեսակ մանչ էր մանուկն Ալէքսի Տը  
լատուր:  
Combien de défauts avait Alexis?  
Ի՞նչ էր իւր միակ պակասութիւնը:  
Qui n'avait qu'un seul défaut?  
Ի՞նչ բան ծնունդ կուտայ բոլոր միւս մո-  
լութեանց:  
Ի՞նչ բանի ծնունդ կուտայ այս մոլութիւնը:  
Ի՞նչ յեղիւկուած է յանալս:  
Ի՞նչ է ծուլութիւնը:  
Ի՞նչ կը խորհինք առակներուն վրայ:  
Ի՞նչ բաներ ընդհանրապէս ճշմարիտ են:

## Պատասխաններ

C'est la première leçon.  
Le jeune Alexis Delatour.  
C'était un assez bon garçon, կամ,  
Alexis était un assez bon garçon.  
Alexis n'avait qu'un seul défaut.  
La paresse.  
Le jeune Alexis Delatour.  
Ce vice, կամ, La paresse.  
Ce vice donne naissance à tous les autres.  
Que la paresse donne naissance à tous  
les autres vices.  
C'est un vice.  
Que les proverbes sont généralement  
vrais.  
Les proverbes.

(\*) Հարցումները ֆրանսերէն լեզուաւ կը դնենք ամէն անգամ որ կրնանք ուսանողին ծանօթ տեսց-  
ուածներով եւ հարցական ձեւերով կազմել զանոնք:

## Շարադրական վարժ

## Ի հայերէն քարգմանելի

Alexis était jeune.  
 Alexis était bon.  
 Alexis avait un défaut.  
 Alexis avait un vice.  
 Alexis avait tous les vices.  
 Ce garçon est jeune.  
 Ce garçon est bon.  
 Ce garçon est assez bon.  
 Ce garçon a un défaut.  
 Ce jeune garçon a un défaut.  
 La paresse est un défaut.  
 La paresse est un vice.  
 La paresse donne naissance à tous les vices.  
 Vous savez la première leçon.  
 Savez-vous la première leçon?  
 Combien de leçons savez-vous?  
 Combien de proverbes savez-vous?  
 Nous pensons que le proverbe est vrai.  
 Nous pensons que les proverbes sont vrais.  
 Nous pensons que la paresse est un vice.  
 Nous pensons que vous savez la première leçon.

## Ի ֆրանսերէն քարգմանելի

Ալէքսի մանուկ էր.  
 Ալէքսի աղէկ էր.  
 Ալէքսի պակասութիւն մ'ունէր.  
 Ալէքսի մոլութիւն մ'ունէր.  
 Ալէքսի բոլոր մոլութիւններն ունէր.  
 Այս մանչը պզտիկ (մանուկ) է:  
 Այս մանչը բարի (աղէկ) է:  
 Այս մանչը բաւական բարի է:  
 Այս մանչը պակասութիւն մ'ունի:  
 Այս պզտիկ մանչը պակասութիւն մ'ունի:  
 Մոլութիւնը պակասութիւն մ'է:  
 Մոլութիւնը մոլութիւն մ'է:  
 Մոլութիւնը ծնունդ կուտայ բոլոր մոլութեանց:  
 Առաջին դասը գիտէ:  
 Առաջին դասը գիտէ՞:  
 Քանի՞ դաս գիտէ:  
 Քանի՞ առակ գիտէ:  
 Կարծենք թէ առակը հումարիս է:  
 Կարծենք թէ առակները հումարիս են:  
 Կարծենք թէ ծուլութիւնը մոլութիւն մ'է:  
 Կարծենք թէ առաջին դասը գիտէ:

Յ. Ք. ՀԻՆԴԼԵԱՆ

## ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ

## ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ

## ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ

## Ա. Ասամնային դրութիւն

Սննդեան կաշեւորութիւնն. — Սնունդի բերնի մէջ. — Ակռայներու պատճառն. — Ակռայի մը զանազան մասերն. — Ակռայներու տեսակները. — Ակռայներու եղանակ:

1. Մարդ առանց սննդեան չէ կարող ապրիլ, սնունդը կենաց անհրաժեշտ պայմաններէն մին է, երկար ծովապահուծիւն մը կը խանգարէ առողջութիւնն և յառաջ կը բերէ մահ: Երբ պիտի նկարագրենք մարդկային մարմնոյն զանա-

զան գործարանները, ուսումնասիրելով միանգամայն նոցա խրաքանչիւրին պաշտօնը, հարկ է որ նախ զիտնանք թէ մարդ ինչ կերպով սնունդ կ'առնու:

2. Երբ ու է սնունդ մեր բերնին մէջ մտած է, կրնանք զայն խտրոյն կլնել. շատ անգամ սննդեան ծաւալը արգելք կը լինի կլնելու, օրինակի համար չոր հացի բաւական մեծ կտոր մը ինչպէս կրնանք կլնել. պէտք է նախ զայն մանրել, աւելի փոքր մասանց բաժնել, լորձունքով թրջել. այս վիճակներէ անցնելէն յետոյ, հացի կտորը կրնանք կլնել: Բերնի խողովին մէջ սնունդը երկու փոփոխութիւն կը կրէ, ալուայներու միջոցաւ կը մանրուի, լորձունք կոչ-

ուած հեղուկի մը միջոցաւ կը թրջուի:

3. Ակռայները կը կատարեն ծամելու գործողութիւնը, ակռայները հաստատուած են երկու ծնօտներուն վրայ: Մեր բերնի շարժումէն յայտնի կ'երեւի թէ վերի ծնօտն անշարժ է, զանկին կցուած է, իսկ վարինը միայն շարժական է: Մնունդները իրարու հետ խառնող և այդ խառնուողը ակռայներուն տակ նետողը լեզուն է: Անն այս եղանակաւ շատ քիչ ժամանակի մէջ սնունդները կը մանրուին և կը կազմեն մի այնպիսի խմոր զոր կրնելը շատ դիւրին է:

4. Ակռայն կը մանրէ սնունդը, պէտք է զիտնալ թէ ակռայներն ինչ ձեւ ունին, անոնցմէ խրաքանչիւրն ինչ պաշտօն կը կատարէ և հրքան է նոցա թիւն: Ակռայ մը երեք որոշ մասերէ կը բաղկանայ, *պաակ* (Couronne) որ ակռային արտաքին մասն է, մտն դուրս, առաւել կամ նուազ սրածայր, *արմաս* (Racine) որ մտն մէջ կը գտնուի, *պաւանկ* (Collet) որ արմատը պսակէն անջատող գիծն է:

Առնունք ակռայ մը՝ մէջտեղէն իւր երկայնութեանը կտրենք. անոր ամէն մասերը միեւնոյն կազմութիւնը չունին: Միջին մասը որ ակռային կեղրոնը կը կազմէ խոռոչ մ'է կակուղ նիւթերով լի, ասի մսային մասն (pulpe dentaire) է: Այդ կեղրոնին շուրջ նիւթ մը կայ որ ակռային ամենէն մեծ մասը կը գրաւէ, այդ ոսկրային մասն (ivoire) է: Պսակին մէջ, այս վերջնոյն շուրջ, կը գտնուի առաւել փայլուն, առաւել կարծր խաւ մը որ կիտուած (émail) կը կոչուի: Կիտուածն ամէն ակռայի պաշտպանողական մասն է, այն է որ թծունեւորուաւերիչ ազդեցութենէն զերծ կը պահէ ակռայն:

5. Դիտենք ստորին կզակի աջակողմի մասը. ութ ակռայներ պիտի տեսնենք որք միեւնոյն ձեւը չունին: Կզակի այդ կիսոյն վրայ եղող առաջակողմի երկու ակռայներն մէկ արմատ միայն ունին, ասոնք կը կոչուին *հերձողի* (incisives), սնունդը կը կտրեն, հացի կտոր

մը կամ պտուղ մը երբ խածնենք, հերձողները զայնս կտորներու կը վերածեն: Հերձողներուն քով ակռայ մը կը գտնուի իւր ձեւով տարբեր, ասոր պսակը աւելի խոշոր է, աւելի ուռած և սրածայր. շան ակռայն է (canine), ասի շան բերնին մէջ ամենէն աւելի զարգացեալն է: Շան ակռայը կը մանրեն սնունդը: Շան ակռայներէն վերջ կուգան *աղօրիք* (molaires), թուով հինգ: Լայն պսակ մը ունին, դիւրաւ կը փոշիացնեն սնունդը: Ամէն աղօրիք իրարու նման չէ, շան ակռայէն վերջ եկող առաջին երկուքը միւսներէն աւելի փոքր են, *փոքր աղօրիք* (petites molaires) կը կոչուին: Միւս երեք մեծերը *խոշոր աղօրիք* (grosses molaires): Կզակին ամէն մէկ կողմը եղող վերջին աղօրիքն *խնամքեալ ակռայ* (dent de sagesse) եւս կը կոչուի:

Վերի ծնօտը վարինին նման միեւնոյն թուով ակռայներ ունի, 4 հերձող, 2 շան ակռայ, 4 փոքր աղօրիք, 6 խոշոր աղօրիք որոց երկուքը իմաստութեան ակռայք:

Մարդոց բերնին մէջ 32 ակռայ կը գտնուի:

6. Մանուկը ծնած միջոցին ակռայ բնու չունի, չորս ամսու հասակին մէջ, մէջտեղի հերձողները կ'երեւին, նախ վարի կզակին վրայ, յետոյ վերինին վրայ: ասոր կը յաջորդեն միւս հերձողները, առաջին փոքր աղօրիք, երկրորդ խոշոր աղօրիք և ամենէն վերջ շան ակռայք:

Երկու կամ երեք տարեկան տղուն բերնին մէջ 20 ակռայ կայ: 8 հերձող, 4 շան ակռայ և 8 փոքր աղօրիք: Ասոնք կը կոչուին առաջին շրջան կամ կածի ակռայ (première dentition ou dentition de lait): Մինչեւ եօթն տարեկան այս ակռայները կը մնան: Յետոյ մի առ մի կը շարժին, ինքնին կ'իյնան, ամէն իշնող ակռայի կը յաջորդէ իրեն նման ակռայ մը, աւելի զօրաւոր և հաստատ, այնպէս որ քսան ակռայներն ալ կրկին կ'երեւին քիչ ժամանակէ վերջ:

Փոքր աղօրիքներէն վերջ, խոշոր աղօրիքները յառաջ կուգան, խմատուծեան ակռայները երբեմն շատ ուշ կ'երևին:

Սովորաբար, քսան տարեկան մարդ մը իւր բոլոր ակռայներն ալ ունի, թուով 32, այսինքն 8 հերձող, 4 շան ակռայ, 8 փոքր աղօրիք և 12 խոշոր աղօրիք: Ասոնք կը կոչուին երկրորդ շրջանի ակռայներ (Seconde dentition):

Մ. Գ. ՄՕՁԵԱՆ

### ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆՔ

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

Ուսումնական Խորհրդոյ չաբաթական նիստն տեղի ունեցաւ այս Զորեքշաբթի Ատենապետութեամբ Պէրպէրեան Ռէթէոս Էֆէնտի:

Խորհուրդն իւր այս նստին մէջ՝ բացի դպրոցական զանազան խնդիրներէ, զբաղեցաւ գլխաւորաբար Մասիս հանդէսի հրատարակութեան վերաբերեալ մանրամասնութեամբ, եւ Սմբատ էֆ. Դաւթեանի տեղ թերթին Տնօրէն կարգեց զՅովհաննէս Էֆէնտի Արամեան:

Խորհրդոյ յաջորդ նիստն տեղի պիտի ունենայ Մայիս 11ին:

ՀՐԱԽԷՐ ԱՌ ՈՒՍՈՒՑԻՉՍ

Ուսումն. Խորհրդոյ կողմանէ վկայականի արժանի դատուած ուսուցիչք, որոց անուանքն արդէն հրատարակուած են ի լրագիրս, կը հրաւիրուին ներկայանալ յԱզգային Պատրիարքարան եւ ստանալ իրենց ուսուցչական վկայականներն:

## ԼՈՒՐՔ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ՂԱԼԱԹԻՈՅ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Ղալաթիոյ Կեդրոնական Վարժարանի Պատ. Խնամակալութիւնը վերջին 1892-93 տարւոյ մատակարարութեան տեղեկա-

գիրը մատուցած է Ազգ. Կեդր. Վարժութեան, որ անոր քննութիւնը յանձնած է Ուսումնական եւ Տնտեսական խորհրդոյ: Տեղեկագիրն ուսումնական վիճակի վերաբերեալ մասէն կը տեսնուի թէ 1892-93 դպրոցական տարւոյն մէջ վարժարանն ունեցած է ընդ ամէն 121 աշակերտ, որոց 90 ը նախորդ տարիէն մնացած, իսկ 31ը նոյն տարւոյ սկիզբը մտած ի վարժարան: Այս թիւը 5 կարգաց մէջ բաժնուած է այսպէս. Ա. կարգ՝ 36, Բ. կարգ՝ 33, Գ. կարգ՝ 28, Դ. կարգ՝ 11, Ե. կարգ՝ 13: Տարեկան քննութեանց արդեանց համաձայն՝ Ա. կարգէն 29, Բ. էն 25, Գ. էն 25, Դ. էն 9 աշակերտք, յաջորդելով 6 կամ 6 էն աւելի միջին թիւ ստանալ, արժանի համարուած են դասարան փոխելու, եւ Ե. էն 12 աշակերտք ներկայանալով աւարտական քննութեանց՝ թէպէտ ամէնքն ալ յաջողած են օրինական միջին թիւը (6) ստանալ, բայց 4ը չկարողանալով բնական եւ չափական գիտութեանց մէջ գոհացնել Խնամակալութիւնը, այս վերջինք միայն Դպրութեանց Պատկաւորի աստիճան ստացած են, իսկ մնացեալ 8ը միանգամայն Դպրութեանց եւ Գիտութեանց Պատկաւորի աստիճանին արժանացած: 12 չըջանաւարտից անուանք ժամանակին հրատարակուած են ազգային օրաթերթից մէջ: Տեղեկագիրը կը յիշատակէ առաջին չորս կարգաց իւրաքանչիւրէն քննութեանց մէջ առաջին հանգիսացող աշակերտին անունը. Գ. կարգէն՝ Յակոբ Ալեանագեան, միջին թիւ 8, 29. Դ. կարգէն՝ Յարութիւն Հալաճեան, միջին թիւ 9, 07. Բ. կարգէն՝ Թորգոմ Գալլեան, միջին թիւ 8, 76. Ա. կարգէն՝ Յովհաննէս Համամճեան, միջին թիւ 9, 23: Բարձրագոյն թիւն է 10:

Տեղեկագիրը կ'ըսէ թէ որչափ որ Խնամակալութիւնը ասկէ յառաջ իր յատուկ պատճառներն ունեցած էր կրթական Յայտագրով գծուած եռամեայ եւ երկամեայ երկու շրջանները մի միակ հնգամեայ միաձոյլ շրջանի վերածելու, երկու շրջաններ ունենալու առաւելութիւնք սակայն չէին վրիպած երբեք իւր ուղադրութե-

նէն, միայն թէ կը ջանար եւ կ'սպասէր որ «Ա. Բ. եւ Գ. կարգերն այնպէս մը պատրաստուին որ կարելի ըլլայ, երրորդ տարւոյն վերջը, իրապէս բոլորել առաջին շրջանը»։ Եւ ահա՛ այս 92-93 տարեշրջանը իննամակալութիւնն իր այս նպատակին հասցնող փոխանցման շրջանը եղած է, որու միջոցին Ուսմանց Ծրագրոյն գործադրութեան մէջ կատարուած բացառիկ ու ժամանակաւոր կարգադրութեանց շնորհիւ Գ. կարգը յաջողած է վերջնապէս ըստ կարելոյն տեսնել կրթական Յայտագրով Ա. շրջանի համար որոշուած ուսումները։ Հետեւաբար իննամակալութիւնը ներկայ 93-94 տարեշրջանէն սկսեալ վերադարձած է կանխաւ վարչութեամբ սահմանեալ ուրոյն կրկին շրջաններու դրութեան։ Միայն թէ իննամակալութիւնը իր տեղեկագրոյն մէջ կը յայտնէ թէ երկրորդ շրջանին համար կրթական Յայտագրով գծուած ծրագիրը հարկ դատած է բարեփոխել։ Գ. եւ Ե. դասուց աշակերտը յետ այսորիկ պարտաւոր չափի ըլլան Դպրութեանց եւ Գիտութեանց բարձրագոյն ճիւղերուն միանգամայն հետեւելու, այլ կամ Դրութեանց ճիւղին կամ Գիտութեանց, — երկճիւղաւորման դրութիւն մը, զոր ընդունած ըլլալ կը յայտարարէ իննամակալութիւնը՝ փորձառութեամբ տեսած ըլլալով որ Գ. եւ Ե. դասու աշակերտը ոչ ժամանակ եւ ոչ արամադրութիւն ունին ընդհանրապէս հաւասար յաջողութեամբ հետեւելու գրական եւ գիտական բարձրագոյն ճիւղերուն, եւ թէ հետեւապէս նոյն իսկ իրենց ուսումը շարունակել փափաքող աշակերտներէ չատեր՝ Գ. տարւոյ վերջը՝ կը մեկնին վարժարանէն, երթալու համար այլուր մասնաւոր կերպով աշխատիլ գրական կամ գիտական մասնագիտութիւններէն միոյն զոր նախընտրած են եւ որուն վարժարանը չէր ներեր իրենց նուիրել իրենց ամբողջ ոյժն ու ժամանակը։ Բ. շրջանի այսպէս բարեփոխեալ երկճիւղ ծրագրով իննամակալութիւնը այս ընտրութեան ազատութիւնը ուզած է տալ Գ. էն եկող կամ Ա. շրջանէն մեկնող աշակերտաց, եւ այսու «գոհա-

ցնել ոչ միայն իւր, այլ նաեւ մասնաւորապէս կրթական գործերով զբաղող ազգայնոց շատերու կողմէն անհրաժեշտ նկատուած պէտք մը»։ «Ծրագրոյ այս փոփոխութիւնը, կ'ըսէ տեղեկագիրը, ընդհանուր գծերու մէջ կ'ընդգրկեն նաեւ այն գաղափարները զորս կը թեւադրէր Ազգ. Կեդր. վարչութեան Պատ. Ուս. Խորհրդոյ մէկ տեղեկագիրն, զոր Պատկ. վարչութիւնը հաղորդած էր իննամակալութեանս» Ուս. Խորհուրդը ակնարկեալ տեղեկագրոյն մէջ ջատագոված էր երկու ուրոյն շրջաններու անխառն պահպանման պէտքը, որպէս սահմանուած էր Ազգ. Կեդր. վարչութեանէն։ Իննամակալութիւնը իր ի գործ դրած բարեփոխման յաջողութեան համար գրաւական մը կը համարի սա սլարագայն թէ վերջին տարւոյ Գ. կարգի քննութիւնն անցնելով Բ. կարգ բարձրացող աշակերտը այս տարի գրեթէ ամբողջովին մնացած են վարժարանին մէջ։

Պատ. իննամակալութիւնը առ այժմ չիներկայացներ ուրոյն բարձրագոյն ճիւղաւորեալ շրջանի ուսմանց մանրամասն ծրագիրը, բայց կը խոստանայ մատուցանել զայն Պատկ. վարչութեան, ներկայ 93-94 տարեշրջանի վերջ, եւ առ այժմ կը գոհանայ յայտնելով թէ այդ ծրագրոյ պատրաստութեան մէջ իր նպատակահետեւած է աշակերտներն առաջնորդել ու հասցնել Դպրութեանց կամ Գիտութեանց մասնագէտ ուսուցչի համար Ազգ. Կեդր. վարչութեան Ուսումնական Խորհրդոյ կողմէն հաստատուած քննութեանց ատիճանին, եւ թէ գիտութեանց ճիւղին ծրագիրը պատրաստելու համար մասնաւորապէս առաջնորդուած է Բարիզի Ecole Centraleի նման գիտական բարձրագոյն հաստատութեանց մօից քննութեան ծրագրէն։

#### ԱՐՇԵՍՏԱՆՈՅ Ի ԶՄԻՌՆԵԱ

Զմիւռնիայէն գրուած նամակէ մը կը քաղեմք հետեւեալ տեղեկութիւնը։

— Յառաջիկայ դպրոցական տարւոյ սկիզբէն մեր տղայոց դպրոցին կից ար-

Հետտանոց դպրոց ունենալու պատրաստութեանց արդէն սկսած ենք եւ Զատկէն քանի մը շաբաթ ետքը, Եկեղեցւոյ բակին մէջ, դպրոցական շէնքին կից, արհեստանոցի շէնքին կառուցումը պիտի սկսի՝ քաղաքիս երեւելիներէն Մեծ. Կարապետ Էփէնտի Արապեանի ծախիւք, Ինչպէս ամէն տեղերու մեր դպրոցաց՝ նոյնպէս Զմիւռնիոյ աղքատ դասակարգին համար ամենակարեւոր եւ ամենաարդիւնաւոր հաստատութիւն մը պիտի ըլլայ այս, եւ այժմէն արդէն, երբ միայն լուրն է տարածուած քաղաքիս մէջ, եւ այն ալ ոչ պաշտօնական, ամէն դասակարգ ու բախութեամբ ու ոգեւորութեամբ կ'ողջունէ այս միտքն ու գործը:

### ԱՐՏԱՒԻՆ

ԶՈՒՅՅԵՐԻՍ

Ձեռնական աւխտսուրբան ուսուցումը  
Զուիցերիոյ մէջ

Ժողովրդական հաստատութեանց Ընկերութեան տարեկան Համաժողովին մէջ որ այս տարի գումարուեցաւ Դէսէն նահանգի Լիւկանո քաղաքը, Պ. Պոնդանրի շէշտեցյառակալէս. թէ ստիպողական պէտք կայ՝ նախակրթութեան ծրագրին մէջ տեղ տալ ձեռնական աշխատութեան:

Պէտք չէ քողարկել, ըսաւ նա համառօտիւ, թէ մեծամեծ անգնահատելի բարիքներուն քով, նախնական դպրոցները առաջ բերած են նոյնպէս դժգոհներ, ճիշդ այն պատճառաւ որ կրթութիւնը տարած հասուցած են մինչեւ ժողովրդեան խորին խաւերուն. ասոնք տրանջելով կը կրեն իրենց չուառութիւնը ի տես այն բարգաւաճման զոր հարուստները կը ախուեն անոնց շուրջը: Նախնական դպրոցը պէտք է հաստատել այնպիսի գետնի մը վրայ որ ըլլայ աւելի ուղղապէս գործնական՝ լրջօրէն մտցնելով անոր մէջ երկրագործական, առօրինակ քանդակարարական, ձեռնակալ աշխատանքներու ուսուցումը, որպէս զի կարելի ըլլայ պահել տղան ի-

րենց ընտանի երգին տակ եւ անոնց ձեռքը տալ վերատին իրենց ծնողաց գործիները:

Պ. Պոնդանրի ցաւ կը յայտնէ որ Զուիցերիոյ մէջ ձեռնական աշխատութեան այս ուսուցումը թողուած է մասնաւորաց ձեռներէցութեան, եւ կը պահանջէ որ տեղական ամէն իշխանութիւնը հետեւին ժընէվի նահանգին որ, Ֆրանսայի ըրածին պէս, ձեռնական աշխատութիւնը պարտաւորիչ ըրած է նախնական դպրոցներուն մէջ:

### ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՄԵՋԷՆ

### ԳՈՎԵԼԻ ԳԱՂԱՓԱՐ ՄԸ

Դպրոցաւէր Տիկնանց վարժարանի Տեսչութիւնը, լուրջ հետեւող մը կրթական շարժման, գովելի գաղափար մ'ունեցաւ վերջերս: Վարժարանին բարձրագոյն դասարանի աշակերտուհիները տաւալ, ընկերակցութեամբ ներքին ֆրանսացի դաստիարակուհւոյն եւ բնական գիտութեան ուսուցչին, Վարժարանի միջոցով շագանակողներու վարչութեան տակ գտնուած Սէն-Պրնուա ֆրանսական գոլէժի կենդանաբանական թանգարանին, Հայր Նիքոլա Միւռա, գերազանցապէս հաճոյակատար անձ մը, մասնաւոր հաճոյք մը կ'զգար — երբ մասնաւոր հաճոյք կ'ըսենք, պէտք չէ հետեւցնել Թէ զինքը շրջապատող հիւրերուն սեռը կ'առնէր իրեն այդ հաճոյքը — իւր հիւրերը պըտըտցնելով մուսէոնին ամէն կողմերը, յարդով լեցուած անասնոց վրայ տեղեկութիւններ տալ ջանալով, որոնք, աւելորդ է ըսել, շատ գոհացուցիչ չէին կրնար ըլլալ, այն գերազանց պատճառաւ որ զանոնք տուողն բնական գիտութեանց (գոնէ կենդանաբանութեան) հրմուտ մէկը չէր, իւր իսկ խոստովանութեամբ:

Կենդանիներն յարդով լեցուած և դասաւորուած էին ամենամեծ խնամօք և վարպետի ձեռօք — այդ ալ գոլէժին յագանդիսներէն: Թանգարանին մէջ ամենէն մեծ տեղը կը զբաւէին Թռչուն-

ներն, վիժխարի ջալլեամէն սկսեալ մինչեւ գոհարած ճնսմանն, ամենէն սովորականներէն սկսեալ, մինչեւ ամենէն հագուագիւտներն, որոց վրայ Հայր Միւռա իրեն հետ իրաւամբ հիացուց նաեւ իւր հիւրերն: Իւրաքանչիւր անասուն կը կրէր պիտակ մը, որոյ վրայ նշանակուած էր անունն, մերձ լատիներէն, մերձ ֆրանսերէն, և երբեմն ալ երկուքը միասին: Ուրիշ դասակարգերու վերաբերող անասնոց ամենէն զիստոր ներկայացուցիչներն միայն յարդով լեցուած էին տակաւին, ուրիշներ ալ լեցուելու վրայ էին: — Կենդանաբանական մուսէոնին կցուած էր հանքերու և քարերու ճոխ հաւաքածոյ մը, իւրաքանչիւր տեսակ կրելով նոյնպէս իւր պիտակն:

Սակայն կ'երեւի թէ յարմարագոյն ժամն չէր այն՝ յորում ազնուամիտ Թանգարանապետին առաջնորդութիւնը կը խնդրուէր, որովհետեւ ուրիշ հիւրեր, միշտ կին — բայց ատոնք այլապէս հետաքրքիրներ — կկոցի մը երթեւեկն ընել կուտային խեղճ հօր, որ, վերջապէս, ճարահատեալ, տոյալուեցաւ, հակառակ իւր բոլոր բարի կամեցողութեան, ինչպէս կ'ըսեն, մուսէոնի այցելուններուն արտայայտել, այն կիրձ ու ազնիւ ասացումներով զորս Ֆրանսացին միայն գիտէ հնարել, իւր գոհունակութիւնն այն դոյզն հաճոյքին համար՝ զոր կրցած էր առթել իւր հիւրերուն, խոստանալով միեւնոյն ժամանակ յարմարագոյն առթիւ մը մնալ անոնց հետ աւելի երկարատեւ, այսու թոյլ տալով անոնց՝ յագուրդ տալու իրենց հետաքրքրութեան, և ի վերջոյ, փոխադարձ այցելութեան մը խոստումը տալով, զոր փութացած է կատարել:

Բայց այս մանրամասնութիւնը մեծ կարեւորութիւն չունին: Կարեւորն՝ զադափարն է: Մեր նախակրթարաններու աշակերտք, մանաւանդ միջակ դասակարգէ ընտանեաց զաւակներն՝ ինչպէս են մեծաւ մասամբ, բան չեն տեսած. անկենցաղ է կեանքն զոր կը վարեն ազոնք, տեսակ մը կենդանի-մեռեալներ,

կէս քունի մէջ խեղճ արարածներ են: Անապատուական միջոց մը գտնուք ցնցելու, անոնց մէջի թագուն հետաքրքրութիւնը դուրս ցայտեցնելու, և հաւատացէք թէ մարդուն յառաջացման ամենէն քիչ կարեւոր պայմաններէն չէ հետաքրքրութիւնն, դիտող, մտադիր, հետազննող ըլլալ, այն թանկագին յատկութիւնն չէ այս՝ զոր ամէն վայրկեան կը պահանջենք մեր աշակերտներէն, ում կը ձգտին մեր բոլոր ջանքերն, և ինչ բան աւելի կը նպաստէ այս յատկութեան զարգացման՝ բան դպրոցական շրջագայութիւններ (excursion): Ամառուան գեղեցիկ օդերուն, ատեն ատեն, բարձրագոյն կարգի աշակերտներն առաջնորդել մայրաքաղաքիս մէջ գտնուած գործարաններն, նախապէս ստանալով հարկ եղած թոյլտուութիւնն, ինչ որ չեմ կարծեր որ շատ դժուար բան մ'ըլլայ, այցելել մայրաքաղաքիս փառքն կազմող զիստոր հաստատութիւններն ու հնութիւններն, լեռներ մագցել, ծառաստաններու մէջ մխրճիլ, բուսաբանական և կենդանաբանական հաւաքածոյներ ընել, ի՞նչ պատուական միջոցներ տղուն միտքը զարգացնելու, հետազննող ոգին արթնցնելու, բրբրելու. ի՞նչ սքանչելի առիթ նաեւ տղուն և դաստիարակին մէջ օգտաշատ մտերմութիւն մը հաստատելու՝ որուն անհաշտ կը թուի յաճախ մեր ընտանեկան դաստիարակութիւնը, ի՞նչ թանկագին միջոց, վերջապէս, բարոյական մարդն կազմելու տղուն մէջ, հին, անհուն և անեղ բնութեան ծոցին մէջ բարոյականի անչինչ դասեր տալաւորելու պատանդոյն մտքին մէջ:

Մէկ կողմէն, իրագիտութեան, բնական գիտութեանց դասն աւանդել խոր ցուցնելով, խոր շօշափել տալով, փորձառական կերպով, միւս կողմէն, զբարոյական շրջագայութիւններ, ահա մին ուսուցման այն եղանակներէն՝ յորոց զուրկ են տակաւին մեր նախակրթարաններն մեծաւ մասամբ, և զոր, սակայն, անլ Ժամանակ է ի գործ դնելու:

Յ. Թ. ՀԻՆԴԵԱՆ

## Պ Ա Տ Ո Ւ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ի Յ Ք



ԳԵՐ. Տ. ՄԵԼՔԻՍԵԳԵԿ Ս. ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ

» Տ. ՄԱՂԱՔԻԱ Ս. ԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

ԱՐԺ. Տ. ԵՂԻՇԷ Ծ. ՎԱՐԳԱՊԵՏ ԴՈՒՐԵԱՆ

» Տ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԿՐԵԱՆ

ՄԵԾ. ՏՕՔԹ. ԵԴՈՒԱՐԴ ԷՖԷՆՏԻ ՄԱՍԻՍ

» ԵՂԻԱ » ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

» ԹՈՎՄԱՍ » ԹԷՐԶԵԱՆ

» ԿԱՐԱՊԵՏ » ԻԹԻԻՃԵԱՆ

» ՀՐԱՆՏ » ԱՍԱՏՈՒՐ

» ՄԱՏԱԹԻԱ » ԳԱՐԱԳԱՇ

» ՅԱԿՈԲ » ԴՈՒՐԴԷՆ

» ՅԱՐՈՒԹԻՒՆ » Ն. ՄՕՍՏԻՉԵԱՆ

» ՅՈՎՍԷՓ » ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

» ՏՕՔԹ. ՆԱԶԱՐԷԹ » ՏԱՂԱԻԱՐԵԱՆ

» ՆՇԱՆ » ԳԱԼՖԱՅԵԱՆ

» ՏՕՔԹ. ՊԵՏՐՈՍ » ՄԱԽՈՒԵԱՆ

» ՎԱՀԱՆ » ՄԱՆՈՒԿԵԱՆ

» ՏՕՔԹ. ՎԱՀՐԱՄ » ԹՈՐԳՈՄԵԱՆ

## ՄԱՍԻՍ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԵՏԵՒԵԱԼ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՄԲ

1. Մանկավարժութիւն — Դաստիարակութեան գիտութեան, Հոգեբանութեան եւ Բարոյագիտութեան վերաբերեալ յօդուածներ: — Մանկավարժական խնդրոց վրայ մրցման դրուած հարցումներ:

2. Դասախօսական — Նախակրթական ինքնուրուշ դասեր: — Նախնական ու երկրորդական կրթութեան վերաբերեալ կարեւոր ու նոր դասընթաց: Հրահանգք եւ անշտ դասախօսութիւնք կամ ամփոփումներ դասուց: — Բացատրեալ ընթերցումներ:

3. Բնական — Դասագրոց արժանաւորութեան մասին բնագիտական յօդուածք: — Վարժարանական այցելութեանց Տպաւորութիւնք:

4. Տնօրէնութիւնք — Ուսումնական տնօրէնք եւ Ազգային Վարչութեան ի մասին Ազգային Վարժարանաց:

5. Լուրք եւ տեղեկութիւնք — Ազգային, Ներքին եւ Արտաքին կրթական լուրք եւ ծանօթութիւնք:

6. Զանազանք — Այլ եւ այլ շահեկան եւ հրահանգք գրութիւնք:



### ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Մասիսի տարեկան բաժանորդագիրն է, կանխիկ վճարելի, Կ. Պոլսոյ համար 40 ղրօ. իսկ գաւառաց համար 50 ղրօ. քղրասարի ծախքը մեր վրայ: Իւրաքանչիւր քերքի գինն է 2 ղրօ: Գաւառներէ բաժանորդագրի փոխարէն նամակադրուել եւս կ'ընդունուի 15% զեղչով: Բաժանորդագրութեան, հրատարակութեան եւ այլ ամէն խնդրոց համար պէտք է դիմել առ Տնօրէնն Յովհաննէս Արամեան, Կեդրոնական գրաստուն, Կ. Պոլիս, Զամաքնըլար քիւ 59: